

№ 8-9 ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ 1883

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սուտ հիւանդ (ճշդելու անցք) . . . . . Սըինգ
Մշակ . . . . . Բաֆֆի
Ողբի յիշատակարանից . . . . . Օր. Մինհրուհի
Տերևների անկումը (բանաստեղծութիւն) . Ե. Մ.
Փայտաշէնլրցքից՝—Սպիտակ տունը (IX, X և XI գլ.)-վոլտադրութիւն . . . . . Կ. Տ. - Աւետիք.
Աշնան տերևներ (բանաստեղծութիւն) . . . Կ. Կ. Մ. Շահ.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օդապարիկի հնարողները (ռուսերէնից) . Մ. Փամփուլեա

ԱՅԼ, ԵՒ ԱՅԼԻՔ

Հարուստները ուազքատները.
Փականագործ պըինց.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Մանկական լաց, քաբաթ . . . . . Մեկ լիք
Հանելուկներ 3 հատ.
Շուտասելուկ
Բէքուս

Ի. Ս. Տուրգենևից։

ԽԱՌՆ ԼՈՒԲԵՐ

Պ. Բաֆֆիին քսան և հինգամեայ գրագունէութեան առթի «Նոր Դար»։ «Վարժարան»։ Նոր գալուստ և ամսագիր։ «Աղբիւրի» առա ջի պրեմիան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

«ԱՂԲԻՒՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Կրկին և վերջին անգամ հրաւիրում ենք մեր յարգե այն բաժանորդներին, որոնք դեռ չեն վճարել իրանց բաժանո դագները և չեն կամենում առաջիկայ համարում իրանց անու նները տպագրուած տեսնել՝ փութան ուղարկել իրանց վրայ մնա ցած ապառիկները։

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՔԵՒԱՆԵՔ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ № 8–9

ՕԳՈՍՏՈՍ ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1883

1883

ՍՈՒՏ ՀԻՒԱՆԴ

(Ճշգրիտ անցք)

Ոշտ ձմեռն էր. ամեն տեղ նկատվում էր ամայութիւն և մեռելութիւն: Մեծ պատի ազդեցութեան տակ հատակատոր մարդիկ բարեպաշտական և խաղաղ կեանք էին վարում: Ամեն մի դիւղացի մեծ սրբութեամբ կը պահէ մեծ պատը և ամենևին չի մտածիլ զանազանել չար և անիրաւ գործերի վրայ: Այդ մարդկերանց համար մեծ պատը մի ահագին և սրբազան ուժն է, որ չը պէտք է մնեղէն ուժեն, այլ բուսեղէն կերակուրներ: Թէև հատակատոր մարդիկ ամենայն յօժարութեամբ հնազանդում էին այդ օրէնքին, բայց ի՞նչ կասէք այն փոքրիկ չարաճճիներին, որոնց համար մեծ պատը տարի էր դառել, և որպէս զի դրա առաջը առնեն, այսինքն՝ որ պատ ուտեն, զանազան հնարներ էին մտածում:

Ընտանեկան անհամբերը՝ որ կամենում էր աղուէսի խորամանկութիւնով պաս ուտել, էր գիժ Լևոնը, որ կամենում էր արդէն իր գործը սկսել: Սա ամեն առաւօտ, որ զարթնում էր դեռ նորածին արշալոյսը չ'երևացած, մի օր չափից դուրս շատ քնած մնաց:

Լևոնի զգայուն մայրը քանի անգամ «Լևո՛ն» ձայնեց, չ'եղաւ, չը վերկացաւ...

Մեր խորամանկը թէև արթուն էր, բայց կամենում էր իրան հիւանդ ձևացնել, որ կարողանայ տապակած ճուտ անոյշ ա-նել: Նա վստահ էր իր մօր որդեսիրութեան (մանաւանդ հիւանդ եղած ժամանակ) և բարիութեան վրայ:

—Լևո՛ն, Լևո՛ն, կրկին ձայնեց մայրը. ի՞նչ է պատահել քեզ հետ, որդի...

Սակայն որդին այդ միջոցին այնպէս իրան ձնշել ու ընչաւութիւնը արգելել էր և վերմակը այնպէս ամուր գլխին էր քաշել ու փաթաթուել մէջը, որ դէմքը գիլ կարմիր խնձորի պէս էր ստացել, իսկ քրտինքը այնքան էր հոսել մարմնի ծակոտիներից, որ թրջել էր տեղաշորը:

—Լևո՛ն, ա՛յ բալայ, վեր կաց է՛... կրկին և նորից ձայնեց մայրը:

Բայց ոչ մի ձայն, ծպտուն չը լսուեցաւ: Ձը համբերեց մայրը: Երկիւղածութեամբ յետ քաշեց վերմակը և... և վերոյիշեալ տեսարանը ներկայացաւ իր առաջ:

—Վա՛յ հողն իմ գլխին կենայ... խեղճ երեխաս տաքութի՛ւն է տալիս, ես քաշրի նման կանգնել եմ մօտը և ոչինչ չեմ շինում... կէս սրբիմնած, կէս շփոթուած հառաչեց մայրը:

—Լա՛ւն ջան, որ տեղդ է գալում... քեզ ի՞նչ պատահեց այսօր... տաքութի՛ւն ես չե՞ս տալի, հարցրեց անհամբերութեամբ մայրը:

—Չ՛գիտեմ... գլուխս գալում է, գալում... ծանրութեամբ հառաչեց աղա Հիւանդը:

Մայրը անյապաղ և զգուշութեամբ նստացրեց որդուն տեղաշորի մէջ, հինգ—վեց բալիշ դնելով մէջքին, որպէս յենարան: Լակ կուրծքը, գլուխը և անդամները փաթաթեց երկու այլ վերմակով, որ Հիւանդը չը մրսի:

Օրը կիսուել էր: Գիւղացիներն ամենն էլ ճաշել էին և կրկին գործի եռեւից գնացել. կանայք էլ իրանց բանու գործին էին ձեռք խփել,—մէկը ճախարակ կամ իլիկ էր մանում, միւսը բուրդ էր գզում, երրորդը հաց էր թխում... մի խօսքով ոչ մի պա-

բաց ստուեր չէր երեւում, բացի Լեւոնի մօրից, որ նստած հիւանդի մօտ թաշկինակով ճանճեր էր քշում, որ հիւանդին չը նեղացնեն։ Խեղճ մայրը անհամբերութեամբ հարցեր էր առաջարկում և միշտ տխրալի պատասխաններ ստանում։ Ամբողջ օրը մի պատառ հաց չէր դրել բերանը. իր քաղցածութիւնը աչքի չէր գալի, միայն իր միակ որդու վրայ էր մտածում, որ յանկարծ այնպէս ծանր հիւանդացաւ։

Բայց մեր սուտ հիւանդի փորը այդ ժամանակ վեց-վեց էր անում. մայրը կարծելով որ հիւանդը ախորժակ չի ունենալ ուտի. և ոչինչ չէր հարցնում այդ մասին։

—Մայրիկ, սոված եմ, ասաց վերջապէս հիւանդը չը դիմանալով երկարատև քաղցածութեանը։

—Այս լաւ է, ասաց մայրը ինքն իրան մտածելով, որ եթէ հիւանդը ինքն ուտել կամեցաւ, կը նշանակէ շուտով կը լաւանայ, և նա ուրախութեամբ հարցրեց։

—Ի՞նչ կուզես, որ պատրաստեմ։

—Ինչ որ կեփես՝ կուտեմ, պատասխանեց հիւանդը, վստահ լինելով որ իր մայրը ուտիս ուսայ կերակուր կը պատրաստի։

—Գնամ մի հաւ տապակեմ:

—Ա՛յ, այդպես կը խաբեմ հա՛, ասաց ծխծաղելով Լևոնը, երբ մայրը հեռացել էր. կարծում էք ես բան չեմ հասկանում: Տասական որ ուտեմ, էլ անհանգիստ չեմ լինել... բայց փորս վեց—վեց է անում... Ու մեր սուտ հիւանդը, տեղից վեր կացաւ հաց ճաշելու... խեղճը քաղցից մեռնում էր: Բայց սեղանի վրայ մի կտոր չոր հացից ուրիշ ոչինչ չը գտաւ, որ անոյշ—անոյշ կրծելով կերաւ:

—Ո՛ւտը մորթեցի՛ր, հարցրեց նա տեսնելով մօրը:

—Մեծ նանը չը թողեց, ասաց՝ մեծ պահին ինչ խաբար է ճուտ մորթելը. այնպէս բարկացաւ, որ շերեփը, ջից ճնաց, գլխիս կտոր—կտոր անէր: Ինքը գնաց Հարսի-Օսանին կանչի, ջեզ աղօթի, որ գլխիդ ցաւը անց կենայ. ասաց աչքը ուռած կը լինին:

Մեր աղուէսի վիզը կտրուեցաւ... բոլոր խորամանկութիւնները և հնարները չուրը մաղուեց... բարկացած պատկեց ինքն իրան վնթվնթալով՝ «ե՞րբ պէտք է մեռնի այդ անիրաւ պատուսը, որ ազատուենք նրա ճիրաններից...»: Բայց մի փորը հանգիստ էր առաջուանից. չոր հացն պատառը նրա ախորժակը քիչ կապեց:

Մի քանի րոպէից յետոյ եկաւ Հարսի-
Օսանը և սկսեց իր աղօթքը: Երկար ա-
ղօթելուց, կամ, լաւ է ասել, բաւական սուտ-
սուտ յօրանջելուց յետոյ ասաց՝ Հիւանդին
մի ձերունի է աչքը տուել...

—Մինչև երեկոյեան կը լաւանաս, ասաց
աղօթողը և գնաց իրանց տուն:

Լևոնի սիրտը ճաքել էր այնքան երկար
աղօթքից և վր այ—վր այ յօրանջելուց...
ոչ մի օր այնքան պատիժ չէր կրել, որքան
այդ օր... անիծում էր այն ժամը, երբ
մտածեց այդ չիմար խորամանկութիւնը...
խեղճի Համբերութիւնը հատել էր...

—Լաւացայ, լաւացայ... բացականչեց
վերջապէս մեր Հիւանդը, զգալով որ քաղ-
ցից որկորը Հուպ է եկել և ցամաքել. ճաշ
բերէք, ուտեմ...

Մայրը բերեց ճաշը, որ բաղկանում էր
բաւական Հին Հացից և կծու սոխից: Լևոնը
այնպէս ախորժակով վայելեց սոխն ու Հա-
ցը, որ ոչ ոք չէր կարող երևակայել: Հու-
տով Հագաւ շորերը և վանդակից ազա-
տուած թռչունի նման դուրս վազեց գնաց
ընկերների մօտ...:

ՍՐԻՆԳ

ՄՔԱԿ

(Պարսկաստանի և Տաճկաստանի հայերի կեանքից)

« Թողնը եմ ու եկիը գաւաֆնեբս, այգիս,
« Քանի որ ան եմ կանեմ, կու քազաւ է հոգիս,
« Կուտնի, պոհ ալ կացնը, ձայնիկդ է հոգիս,
« Կուտնի, մեր աշխարհէն խաբբիկ մը չունիս»:

Պանդուխտի երգ.

Ա.

Գալիս է Գարուն, նոր կեանք է բերում.
Վարդ և շուշանը բացվում են, բուրում,
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերև,
Մանուկ զօրութեամբ ծագում է արև:
Շնչում է անուշ: Երգում է ծիծառ:
Վաղորդեան ցօղը սփռում է գոհար,
Կանաչ հովիտը վառվում է պայծառ:
Զարթնեց բնութիւն կուսական խանդով:
Դէպ՝ գործ մեղուները դիմեն եռանդով:
Վաղ—առաւօտեան ձայնը կոչնակին
Կանչում է դէպ՝ դաշտ անբախտ մշակին:
Բայց արշալոյսի վարդագոյն թշեր,
Զարթած բնութեան հրաշալի պատկեր,
Ջեն, չեն հրապուրում սիրտը վշտահար,

Սիրտը, որ մեռած էր յաւով հազար . . .
Գլուխը ծռած մշակը տրտում
Վարում է գութան արգաւանդ դաշտում,
Եւ նորա երգը հնչում է արդէն,
Երգը հոգսերով ծանրացած սրտէն։

Բ

Գալիս է ամառ,—կրակոտ եղանակ,
Անխոնջ վաստակի, պտղի ժամանակ։
Իւր աստուածեղէն ջերմուխեան հոգին
Կենսատու շնչով ծաւալէ արփին։
Հասել է ծիրան, տանձը մեղրածոր,
Աղջկայ թշի պէս վառվում է խնձոր,
Սաթանման — դեղին կախուած է ողկոյզ,
Մանկտին գրաւում է շլոր և թուզ.
Սեխով, ձմերկով լիքն է քօստան,
Ոսկեայ հոսանքով ծփի անդաստան,
Եւ արտորայքի ծանրացած հասկեր
Խիստ հիանալի նկարեն պատկեր։
Յետ երից անգամ երգը խօսնակին՝
Զարթնում է իսկոյն հնձուորի հոգին։
Փայլում է մանգաղ։ Դորձում է մշակ։
Բարձած սայլակի ճռինչն անուշակ
Հնչվում է հեռու, հեռու դաշտերէն,
Բերում դէպի կալ հունձքը արտերէն։
Կասում է իւր կալ, մաքրում է յորեան,—
Պտուղը իւր ձեռքի, քրտնքի, արեան.
Եւ այդ բոլորը նա զոհ է բերում,
Կալուածատիրոջ լեցնում ամբարում,
Անիծելով բախտ, գնում է իւր տուն,
Լացում է սև օր, քաղցած գերդաստուն։

Գ.

Գալիս է աշունն։ Թափվում է տերև,
Սոխակն իւր վարդին տայ վերջին բարև,
Եւ տարափոխիկ արագիլ, կռունկ
Գաղթեն դէպի տաք երկրները խորունկ։
Մահուան դեղնութեամբ ծածկվում են դաշտեր,
Ջուարճասէր սրտից չեն ցրվում վշտեր։
Լիքն է հոնդերով մրջիմին ամբար,
Թէև չը ցանեց, չը կասեց իւր կալ,
Եւ իւր մոմեղէն խցումը շար ի շար
Մեղուն կազմել է ձմեռուայ պաշար։
Իսկ իւր արտերով մեր խեղճ գիւղացին
Մնում է կարօտ պատառ մի հացին.
Տխուր, յուսահատ, գլուխը ծռած,
Նստած է տան մէջ, ձեռքերը փակած։
«Անցուցիր Ամառ, անցուցիր Գարուն,
Ասում է կինը. անցաւ և Աշունն,
Դրանը կանգնած է ցրտաբեր Ձմեռ,
Որդիքս կիսամերկ, որդիքս կիսամեռ՝
Ես ինչով պահեմ, ասա՛ ինձ, ալրիկ»։
—«Աստուած ողորմած է, սպասիր, կնիկ».
Ասաց մշակը և լռեց խակոյն,
Ծածկեց ցաւերը վշտալից հոգուն . . .

Դ.

Գալիս է Ձմեռ,— ալեւոր ծերուկ,
Խոժոռած դէմքով, սպիտակ մօրուք,
Ձը կայ մի ժպիտ նորա աչքերում,

Դառնաշունչ ձայնով սարսափ է բերում.
Սառած է արիւն ողջ երակներում,
Սիրոյ չերմութիւն չը կայ նորա սրտում։
Մ՝ահաբեր ձեռքով ձիւնեղէն պատառ
Տարածում է նա։ Սար, դաշտ և անտառ
Ողջ ծածկվում են սպիտակ պատանով . . .
Լռում է թռչնիկ. մեռնում է ծաղիկ.
Սառցապատ գետակ մնչում է լռիկ։
Կատուրի վերայ նստեց ագռաւ,
Ծերի գալստեան համբաւը բերաւ,
Գռգռաց, գռգռաց և չարագուշակ
Ձայնով դուշակեց գիւղացու վիճակ։
Բայց մեր գիւղացին էլ դուրս չէ երթում,
Փակուած է մթին նա իւր խրճիթում։
Նորա անօթի որդիքը կիսամերկ
Սառը թոնրի մօտ նստած են արտում,
Խաղալ չեն գնում դրսումը՝ ցրտում,
Չի չը կայ հագուստ խեղճերի հագին։
Գոլծում է թէև դազգեահ չուլհակին,
Գործում է կտաւ և մանում է կին,
Բայց նոցա գործուածք պիտ՝ գնան վաճառ
Վճարել խանի տուրքը անվճար։

Ե.

Իսկ մեր մշակի պարտքի մուրհակին
Լրացան տարիք կրկին և կրկին.
Այն անիծեալ պարտք . . . պարտքն պարսկին,
Որով նա գնեց եզները չուխտակ՝
Նզաւ նա գերի ընկաւ Հոգսի տակ։
Նա չունի արծաթ չունի եկամուտ,
Բայց մահմետական վաշխառուն անգութ

Քարշում է տանից նորա երեխան՝
Ծանրացած պարտքի տակոսի վոխան։
Մի բարբարոսին խիղճն ինչ է ծանօթ,
Որ չունի օրէնք, իրաւունք ամօթ . . .
Ի՜նչ անէ խեղճն, ինչ հող տայ գլխին,
Ազատէ կեանքն անբախտ երեխին.
Իւր պարտատէրին ակամայ սրտիւ
Զոհում է նա շատ արտասուք, պատիւ . . .
Մինչ կրկին տարի ժամանակ առաւ,
Տուն, տեղ, ամեն ինչ նա դրեց գրաւ.
Նորից ամրացաւ գերուԹեան շղԹան։
Թողեց վարուցանք, արօր ու գուԹան,
Եւ պանդխտուԹեան կրեց գաւազան,
Դէպի հեռաւոր, դէպ՝ օտար աշխարհ,
Տխուր, սրտաբեկ ուղղեց ճանապարհ։
«Կերթամ,—ասաց նա,—մի լացիր, կնիկ,
Կամ օտար երկրում կը մեռնեմ, կը կորչեմ,
Կամ պարսկի պարտքէն որդիքս կազատեմ . . .»

Զ.

«Ա՜խ Աստուած . . .» կոչեց, գնաց գիւղացին,
Չը նայեց կնոջ արտասուք—լացին,
Թողեց ընտանիք նօթի, կիսաշունչ,
Թողեց աննխնամ, մերկ և անտերունչ։
Երկար տարիներ նա Թափառական
Ընդ ծով և ցամաք պատէր անսահման,
Երկրէ երկիր շրջէր գաղԹ ի գաղԹ
Եւ յուսահատուր որոնում էր բախտ։
Եւ վերջ ի վերջոյ մի մեծ պանդոկում
Եղաւ նա Հ ա մ ա լ, բեռն էր շալակում,
Բեռն էր շալակում, որպէս մի գրաստ,

Գործէր անասնոց նա գործ չարապաստ . . .
Լափչիքը հագած, փ ա լ ա ն ը մէջքին,
Մինչև կէս գիշեր քաղվում էր հոգին,
Եւ նոյն փալանին գլուխը դրած,
Սառը գետնի վերայ քնում էր յոգնած։
Բայց և այդ բախտը չը տևեց երկար.
Մի օր մի մեծ հակ տանում էր բազար,
Ծանր էր բեռը, ծանր և ահագին,
Ոտքերը դողաց աչքերը մթնեց,
Յանկարծ գլորուեց իւր բեռան տակին . . .
Անշունչ կիսամեռ վեր առան նորան
Եւ հիւանդանոց ընկերքը տարան։

Ե.

Ծիծառը գարձաւ դէպ՝ իրա լունը,
Կարգեց, նորոգեց աւերուած տունը,
Բայց մեր մշակից դեռ չը կայ համբաւ,
Ընտանեաց վիշտը գառն էր, անբաւ։
Հին պարտատէրը շատ շատ էր տանջում,
Նորա կնկանից փող էր պահանջում։
Տանջուեց խեղճ կինը, տանջուեց անպայման,
Մանուկ հասակում մաշուած թառամած
Անբախտ գլուխը տարաւ գերեզման . . .
Փոխան նոցա հին պարտքի մուրհակին
Տիրեց պարտատէրը կայք և տնանկին։
Կորած պանդխտի դստերք մատղաշ
Պարսկի հարեմում եղան ղ ա ր ա ւ ա շ.
Հայերից մի տան մարեցաւ օ ջ ա խ։
Բայց քանի՛ հարիւր տներ այդպէս յաճախ
Անհետանում են ամենայն տարի . . .

1857 Մուշ։

ՐԱՖՖԻ

ՈՐԲԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

Ս այն ժամանակ 13 տարեկան էի։ Ո՛չ Հայր ունէի և ո՛չ Մայր. չ՚ունէի մի մարդ, որ գրկէր ինձ սիրով, որին յայտնէի իմ երեխայական սրտիս գաղտնիքները։ Ես որբ էի։ Հօրեղբայրս վերցրեց ինձ իր մօտ. հարևանները ստիպեցին նրան այդ անել։ Մտայ ես դրա տունը. մտայ, նայեցի իմ շուրջը. սենեակը ինձ երևում էր սառը, ամեն բան կարծես այստեղ ինձ տեղիս լինէր։ Սիրտս ճմլում էր, երբ մտաբերում էի ծնողներիս, մեր տունը, մեր կահ-կարասիքը։ Առաջին գիշերը քուն չ՚եկաւ աչքերիս. սիրտս մորմոքվում էր, արտասուքները կարծես ուզում էին ինձ խեղդել։ Միւս օրուանից ես պէտք է սկսէի օգնել Հօրեղբօրս՝ արածացնէի խաշները և հորթերը, ջուր կրէի աղբիւրից և էլի շատ գործեր պէտք է կատարէի։ Լուսացաւ այդ միւս օրը և ես սկսեցի աշխատել։ Երէկ Հօրեղբայրս տեսնում էր ինձ հանգստանալիս, ասում էր.

—Տօ, ի՞նչ ես այդպէս ձեռքերդ ծալել ու նստել։ Հացս ձրի հօ չեմ ուտեցնում։ Եւ այս ասելով ուղարկում էր աշխատելու։ Երբեմն ծածուկ լաց էի լինում, բայց հեռուից հէնց որ Հօրեղբօրս տեսնում էի՝ աչքերս սրբում էի։ Պատահում էր, որ չէի կարողանում նրա ուզածի պէս բան շինել, կամ ինքն ուրիշի վրայ բարկացած էր լինում, այն ժամանակ քեօթակն ինձ էր դիպչում։ Արցունք թափել, հեկեկալ ինձ արգելուած էր. ես ամեն բան համբերութիւնով պէտք տանէի։

—Այ շան լակոտ, լաց ըլել էլ ես սովորել, ասում էր ինձ Հօրեղբայրս և ճիպոտով աւելի սաստիկ էր խփում ինձ։ Ես ատում էի նրան, իմ սիրտս խոցոտած էր և ես մտածում էի նրա համար զանազան չարիքներ։ Ես մըտքումս նրան անիծում էի, երդում էի տալիս ինձ՝ նրանից վրէժխնդիր լինել. իմ փոքրիկ գլուխս այս բանի համար զանազան միջոցներ էր հնարում. ես մտածում էի դիշերը տեղիցս վերկենալ, վերցնել կացինը և սպանել տանջողիս, ես ուզում էի այդ դիտաւորութիւնը կատարել, բայց երբ բարձրանում էի տեղիցս, սիրտս դողդողում էր, ոտներս չէին շարժվում, ձեռքերս չէին բարձրանում, և ես ինձ ու ինձ ատում էի.

—Հիմա չէ կարելի, յետոյ, յետոյ և նորից փաթաթվում էի քնաշորերիս մէջ։ Ես շատ անգամ ուզում էի փախչել, բայց կարծում էի, որ ահա, ահա կը հասնի Հօրեղբայրս, կը բռնի, կը տանի տուն և աւելի կը ծեծի. իմ հին վերքերս նորոգվում էին. ես զգում էի իմ թիկունքիս ցաւերը և . . . տուն դառնում։

Մէկ օր երեկոյեան Հօրեղբայրս վերադարձաւ տուն բարկացած։ Կինն արդէն շատ ժամանակ էր ինչ վախճանուել էր և նա ուզում էր նորից ամուսնանալ։ Մի քանի մարդիկ էր ուղարկել Հարևանի աղջկան ուզելու, բայց Հարևանը մերժել էր դրա առաջարկութիւնը։ Հօրեղբայրս կատաղեց, իրան վիրաւորուած համարելով։ Կնճռուած ճակատով, խոշոռագէմ նա տուն մտաւ, նայեց ինձ վրայ և մի լաւ գլխիս տալով հրամայեց ինձ գնալ աղբիւրից մեծ սափորով ջուր բերել։ Ես շտապեցի դուրս գնալ կատարել հրամանը, զգում էի որ այդ օրը լաւ չի վերջանալու ինձ համար։ Գնացի, ջուրը բերի, սափորի ծանրութիւնից ոտներս հազիւ հազ էի շարժում։ Դողալով ներս մտայ սենեակը։ Հօրեղբայրս նստած էր տախտի վրայ և անհամբերութիւնով քաշում էր չիբուխը։ Ես ուզում էի անց-

նել անկիւնը. նա բարձրացաւ տեղիցը։

—Ինչպէ՞ս ես տանում, գոռաց ինձ վրայ և էլի մի նոր հարուած իջաւ թիկունքիս։ Սափորը ուսիցս վայր ընկաւ և փշուր փշուր եղաւ։

Ես սարսափեցայ։

—Այդ ի՞նչ արիր և հազարաւոր հարուածները մեկը միւսի ետևից թափուեցին ինձ վրայ։ Կուրծքիս վրայ, թիկունքիս վրայ, ձեռներիս և գլխիս վրայ զգում էի հարուածները։ Հօրեղբայրս բռնեց մազերիցս, վայր ձգեց թաց գետնի վրայ և սկսեց ոտներով ծեծել։ Ես լողում էի ջրի և սափորի կտորտանքների մէջ։ Ես լաց էի լինում, իսկ իմ լացս աւելի էր զայրացնում ծեծողիս, հարուածները սաստկանում էին. ես այլ ևս ոչինչ չէի զգում և միայն ժամանակ առ ժամանակ հազիւ կարողանում էի լսել հօրեղբօրս կատաղի ձայնը։

—Էլի կանե՞ս . . . Այ քեզ. հոգիդ կը հանեմ, և հազար ու մի հայհոյանք թափվում էին հարուածների հետ ինձ վրայ։ Վերջապէս ես ուշաթափուեցայ։ Չը գիտեմ էլի ինչքան ժամանակ ինձ հարուածում էր հօրեղբայրս. երևի դադրածուխիւնը ստիպեց նրան գթալ ինձ վրայ։

Երբ ես ուշքի եկայ, արդէն գիշեր էր. ես պարկած էի դեռ ևս գետնի վրայ, միայն մի վերմակ ծածկում էր իմ ջարդուած մարմինը։ Ես մի րոպէում մտաբերեցի գըլխովս անցածը. նստեցի գետնի վրայ, յետ ձգեցի վերմակը և սկսեցի նայել շուրջս։ Ահա լսւում է հօրեղբօրս ծանր շնչառուխիւնը։ «Այդ չափ ինձ ծեծեց, և հիմա նա կարողանում է հանգիստ քնել», ասում էի ինքս ինձ։ Մի քանի րոպէից յետոյ վճռեցի փախչել։ Հազիւ հազ ես բարձրացայ տեղիցս. սիրտս սկսեց դողդողալ և ինքս էլ բոլոր մարմնով մի կողմից միւս կողմն էի ընկնում։ Ոչինչի վրայ ես չէի մտածում. գիտէի միայն, որ հարկաւոր է փախչել, վազել, հեռանալ այդ գազանից։ Ես կա-

մայ — կամայ մօտեցայ դռանը և զգուշութիւնով բացարեցի։ Մի քանի րոպէից յետոյ ես բակումն էի։ Շունը մօտս վազեց, ես ձեռքս դրեցի նրա գլխի վրայ և ցածր ձայնով շշնչացի.

— Մնաս բարով. ես գնում եմ այս տեղից, և յետոյ թռայ շրջապատից և սկսեցի վազել գիւղից հեռու։ Ես գնում էի, գնում առանց ետ նայելու, վախենալով մի գուցէ դրանով ժամանակ կորցնեմ։ Մէկ ինձ թւում էր թէ՝ ահա ետևիցս գալիս է հօրեղբայրս և հասնելով ինձ բռնում տանում է էլի տուն։ Մէկ էլ ինձ թւում էր, որ իմ շուրջս, առաջից և ետևից, աջ ու ձախ կողմերիցս վազում են սատանաներ, ինձ ծաղր են անում և ուզում են ճանապարհս կտրել։ Սիրտս աւելի էր բաբախում, արիւնս երակներիս մէջ աւելի շատ էր վազում. ոտներս հազիւ էի շարժում, ես աւելի ու աւելի էի յոգնում։

Վերջապէս շնչասպառ ընկայ գետնի վրայ։ Երբ զարթեցայ, արեգակը արդէն բարձրացել էր։ Ես նայեցի իմ շուրջը և ազատ օդ շնչեցի։ Կենդանանար զովութիւնն ազդեց ինձ վրայ։ Ես վերկացայ տեղիցս։ Երէկուայ ծեծից մի քանի տեղ դեռ ևս ցաւ էի զգում։ Ես բարձրացայ և նայեցի շուրջս։ Քանի տարի էր, ես դեռ ազատ օդ չէի շնչել, քանի տարի էր՝ ես չէի տեսել այդպիսի առաւօտ։ Ես անտառի մօտ էի։ Ծառերն ուրախ բարձրացրել էին իրանց գագաթները դէպի երկինք և կարծես արևին էին ողջունում։ Այստեղ և այնտեղ խոտի մէջից երևում էին ծաղիկները և օդի մէջ տարածում իրանց անուշահոտութիւնը։ Թռչուններն արդէն զարթել էին և երգում իրանց առաւօտուայ երգը։ Ես մօտեցայ մի բարձր ծառի և սկսեցի նայել նրա վրայ։ Ծառի տերևները բաւականին տարածութեան վրայ խիտ ստուեր էին ձգել. փոքրիկ ծառերը շրջապատել էին հսկային, նրանք կարծես նրա տակ ուզում էին պաշտպանուիլ

թշնամիներից՝ քամուց, անձրևից, կարկուտից և արևի տաք ճառագայթներից։

—Ամեն բան ունի իր պաշտպանը, միայն ես եմ որ այս աշխարհում ոչ ոք չ՝ունիմ, ոչ ոք ինձ չի պաշտպանում. ես որբ եմ, մտածում էի ես։

Ես նստեցի այդ ծառի տակ. երկար, շատ երկար ես այդպես նստած չէի շարժվում. կամաց—կամաց սկսեցի պառկել թիկունքիս վրայ և աչքերս դէպի երկինք դարձնել։ Արևը բարձրացել էր, փոքրիկ ամպերը վազում էին երկնքում։ Աչքերս կապոյտ երկնքից դարձրի դէպի բարձր ծառը։ Տերևները հանգիստ և պինդ միաւորվում էին միմեանց հետ, քամին գրկում էր ծառը, խօսում էր նրա հետ, ապա մէսի հետ և այդպէս շարունակում էր իր ճանապարհը։

Այդպես պառկած դրութեան մէջ կէս արթուն կէս քուն էի, մեկ էլ ինձանից շատ մօտիկ թռչնիկների ձայները լսեցի... Դլուխս այն կողմը շուռ տուեցի և մօտակայ թփի մէջ տեսայ մի ճնճղուկի բուն։ Ես նայում էի բնի մէջ գտնուող ճուտերի վրայ, տեսնում էի թէ ինչպէս մայրը բերում էր նրանց համար կերակուր և դնում հերթով ամեն մէկի բերանը և էլի թռչում գնում կերակուր պտրելու։ Ահա արդէն նա հինգերորդ անգամ կերակուր բերեց և արդէն պատրաստվում էր գնալ էլի բերել։ Յանկարծ բազէն իր սրատես աչքերով վերևից տեսնելով խեղճ ճնճղուկներին, նետի արագութեամբ վայր իջաւ և առաջ քան թէ ես կը կարողանայի բարձրանալ և օգնել խեղճին բազէն բռնեց իր զոհին և թռաւ գնաց օդի անսահման տարածութեան մէջ։

Ես կանգնած էի և աչքերով հետևում էի գիշատիչ թռչունի ընթացքին։ Նա բարձրացաւ և իջաւ ինձանից շատ հեռու մի բարձր ծառի վրայ։ Ես նայում էի և քարեր ձգում, բայց ոչ մեկը չը դիպաւ նրան, բազուկներս

անզօր էին։ Խազէն անհետացաւ, բայց ես էլի կանգնած նայում էի։ Որը թողած ճնճղուկների ճվճվոցը ինձ դուրս բերեց այդ դրութիւնից։ Ես մօտեցայ թփին։ Փոքրիկ նորածին թռչունները անհամբեր սպասում էին իրանց մօրը։

— Խեղճ որբիկներ, դուք էլ նրան չէք տեսնի, ասացի ես։ Երկար ժամանակ ես կանգնած նայում էի նրանց վրայ և սպասում էի նրանց հօրը, բայց թռչունը չէր երևում։

— Երևի, նա էլ չը կայ. երևի նա էլ է մեռել։ Առաւօտեան ուրախութիւնս բոլորովին անցաւ։ Ինձ վրայ էլ ոչինչ չէր ազդում. ո՛չ արևը, ո՛չ մաքուր օդը, ո՛չ անտառը և ո՛չ էլ թռչունների քաղցր երգերը։ Այնտեղ էլ ամենքը բախտաւոր չեն, այստեղ էլ կայ վիշտ, այնտեղ էլ հոգսեր կան։ Ոչինչ, ոչինչ չը կայ աշխարհում կատարելապէս բախտաւոր։ Ուրախութիւնը խառն է տխրութեան արտասուքի հետ։ Ես կանգնած էի և նայում էի որբիկների վրայ։ Քաղցածութիւնն աւելի և աւելի էր տանջում նրանց. աւելի և աւելի ցաւալի ձայներ էին հանում։

— Դուք էլ որբ էք ինձ նման, ոչ ոք չ՚ունէք աշխարհում. պաշտպան չ՚ունէք, մխիթարիչ չ՚ունէք, միայնակ էք աշխարհիս երեսին։ Եւ իմ թշուառ օրերս, որբութիւնս, աչքերիս առաջ կանգնեցին . . . դուք. խիղճ ծագեց սրտիս մէջ դէպի անմայր մնացած թռչունները։ Ես գիտէի որ դրանց էլ իմ վիճակի պէս վիճակ է սպասում։ Ճնճղուկները ճվճվում էին, կերակուր խնդրում։ Ես հեռացայ նրանցից. ես չէի ուզում լսել նրանց աղաղակը, տեսնել նրանց յուսահատ թևին թևին անելը։ Շատ հեռու դեռ չէի գնացել, յորենի արտեր տեսայ, գութը աւելի էր ինձ գրգռում. ես քաղեցի մի քանի հասկեր, հանեցի նրանցից հատիկներ և տարայ խեղճ որբիկներին տուեցի։ Այդպէս ես կերակրեցի քաղցածներին։ Արևը բաւականին բարձրացել էր, ճառագայթները սաստիկ այրում էին. բնութիւնը հանգիստ էր, ոչ մի ձայն

չէը լսվում։ Ես ևս քաղծեցի. դեռ ոչինչ չէի կերել։ Հայ չ'ունէի, հեռուում տեսայ մի առուակ. վազեցի վրայ ընկայ և մի կուշտ խմեցի, բայց քաղցածութիւնս չ'անցաւ։ Ես վերադարձայ բնի մօտ, և նայելով ճնճղուկներին մտածում էի, ինչպէս օգնեմ նրանց։ Յանկարծ քամին փչեց միւս կողմից և ես հազիւ հազ կարողացայ լսել երկրագործի երգից մի քանի խօսք։ Ես կենդանացայ. շտապով հանեցի թփից բունը թռչնիկների հետ միասին և գնացի դէպի այն կողմը, որտեղից լսվում էր ձայնը։ Գիւղացին հունձ էր անում, ես խնդրեցի նրանից մի կտոր հաց. նա գթաց ինձ վրայ և կերակրեց։

— Ո՞րտեղից ես, հարցրեց յետոյ նա ինձ։ Ես բոլորը նրան պատմեցի։

—Ե՛կ ինձ մօտ, ես քեզ կը պահեմ, ասաց նա. ինձ կօգնես, մենք միասին կաշխատենք։

Այդ օրից ես բնակվում էի գիւղացու մօտ և նրան օգնում։ Ո՛չ ծեծ, և ոչ էլ մի կոպիտ խօսք ես նրանից չը լսեցի։

Երբ ես մտաբերում էի ծնողներիս, երբ ես միայնակութիւնից տխրում էի, վազում էի իմ ճնճղուկների մօտ, որոնց բունը ես տեղաւորել էի մեր կալի սիւնի վրայ յարկի տակ։ Ամեն առաւօտ նրանց համար ցորենի հատիկներ և ջուր էի տանում ու խօսում նրանց հետ, մխիթարում էի նրանց։ Թռչնիկները կարծես ինձ հասկանում էին։ Երբ նրանք բաւականին շահացան սկսեցին թռչել. նրանք նստում էին իմ ուսերի վրայ, ձեռներիս վրայ և ճվճվում ուրախանում։ Այդպէս ես նրանց մեծացրի։ Եւ այժմ մեր բակում կան շատ ճնճղուկներ, նրանք իմ ազատածների սերունդն են, նրանք բոլորն էլ մեր տունը սիրում են։ Ես այժմ հասկանում եմ նրանց լեզուն՝ նրանց ճվճվոցը։

Հօրեղբայրս չէը աշխատում ինձ գտնել. նա ուրախ էը, որ ինձանից ազատուեց. աւելորդ բերան չը կար հայ ուտելու։

ՕՐ. ՄԻՀՐՈՒՀԻ

ՏԵՐԵՒՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԸ

(Charles Millevoye)

Մեր անտառների շքեղ զգեստներ
Գետնին էր սփռել Հոդմոտ աշունը.
Անզարդ անտառը էլ գաղտնիք չ՚ուներ,
Պօէտ-սոխակը կտրել էր ձայնը։
Խուլ քայլերով մի հիւանդ պատանեակ,
Իւր արշալուսին, կիսամեռ, տրտում
Դարձեալ մի անգամ շրջում էր մենակ—
Մանուկ օրերից սիրած անտառում։
«Անտառ, մեռնում եմ, դէհ, մնաս բարև.
Քո սուգը իմ մահուան է նշան
Եւ քեզնից ամեն մի ընկնող տերև,
Կարծես գուշակում է իմ մօտիկ վախճան։
Զարագոյժ հարցուկ Եպիդաւրոսի [1]),
Դու ինձ ասացիր. «Տերևներն աշնան
« Քո աչքին առաջ դեռ պիտի դեղնին.
« Բայց իմացիր, այս վերջին է անգամ.
« Քո շուրջ՚ պատել է անթափանց նոճին [2])
« Սէլէի գունատ քան գունատ աշուն,
« Դու մօտենում ես մութ գերեզմանին։
« Պիտի թափանցի քո մատաղութիւն

---

[1]) Եսկուլապիոսը՝ բժշկականութեան աստուածը մի տաճար ուներ Ցունաստանի Եպիդաւրոս քաղաքում՝ Արգուլիդում։ Բանաստեղծը ասելով՝ «Զարագոյժ հարցուկ Եպիդաւրոսի», կամենում է հասկացնել՝ «Զարագոյժ նախագուշակութիւն բժիշկներից»։

[2]) Նոճի—Cyprès, кипарисъ, միշտադալար ծառ։

« Նախ քան արօտը դաշտավայրերի,
« Յառաջ քան ուռը այգ բլուրների»
Եւ մեռնում եմ ես. իբրեանց պաղ շնչով
Հալում մաշում են ինձ ուժգին հողմեր.
Եւ տեսնում եմ ես, ինչպէս իմ գարուն
Հալվում է որպէս մի նուազ ստուեր։
Դէհ, ընկէր, ընկէր, տերև սղակեայ,
Ծածկէր հայեացքից այս տխուր ուղին.
Ծածկէր մօրիցս իմ յուսահատուած
Այն տեղը, ուր ես էգուց պիտ՝ լինիմ։
Իսկ եթէ անխօս դէպ՝ այս ծառուղին,
Երբ աղմկալի ցերեկը ծածկուի,
Գայ վերաս լալու իմ խեղճ սիրուհին,
Ֆո մեղմ սօսափիւն թող որ զարթեցնի
Ա՛ռ ժամ սփոփած ստուերս ողբալի։»
Ասաց. հեռացաւ, անդարձ հեռացաւ.
Եւ հազիւ ընկաւ տերևը վերջին,
Նորա օրհասի նշանը տուաւ։
Կաղնի ծառի տակ նորան թաղեցին։
Բայց իւր սիրելին այլ չ՚եկաւ նորան
Չ՚եկաւ տեսնելու միայնակ շիրիմ,
Եւ դաշտում միայն հովուի ոտնաձայն
Անդորրութիւնը խանգարեց, խորին
Անդորրութիւնը գերեզմանական։

Ե. Մ.

ՓԱՅՏԱԾԵՆ ԽՐԱԹԻՑ

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆԸ

(Շարունակութիւն)

Ի՜նչպիսի ուրախութիւն էր երեխայի համար, երբ Կլևելանդից վերադարձին Թրիքի հիւսն ու Թոմին սկսեցին տան շինութիւնը, որի համար Ջէմսի ծառայութիւնը շատ պէտք եկաւ. վարպետը շարունակ փոքրիկ բանուորին գովում էր: Մանաւանդ խիստ ճարպիկ կերպով Ջէմսը խցում էր գերանների արանքի բացուածքը և այն աստիճան կատարելութեան հասցրեց, որ մեծ եղբօր ձեռքի տակ վարժուեց գեղեցիկ կերպով ռանդայ տալ տախտակները:

Ատաձագործութիւնը շատ դիւր եկաւ երեխային, և նա ինքն իր մէջ վճռեց վաղ թէ ուշ այդ արհեստով իր հացը հայթայթել:

Վերջապէս տունը բոլորովին աւարտուեց, ընտանիքը փոխադրուեց նոր բնակարանը: Թոմին գնաց Միջիգան, իսկ Ջէմսը դէմովին անձնատուր եղաւ տնային պարապմունքին:

—Մայրիկ, ասաց նա մի անգամ մօրը, էլ աւելի ոյժ չ'ունենալով թագցնել սրտի ծածուկ խորհուրդը, ես մտածել եմ թէ ինչ միջոցով պէտք է իմ հայս ճարեմ:

—Ի՞նչ միջոցով, հարցրեց մայրը:

—Հիւսն կը դառնամ:

—Է՜ սիրելիս, մի՞թէ կարող ես պարապել դրանով. դու տանը մինչև վիզդ խրուած ես գործերի մէջ, նկատեց մայրը:

—Փորձի համար մի քիչ գործ կը վերցնեմ դաշտային աշխատանքից ազատ ամիսներում. կարելի է քիչ միչ փող ճանկեմ. այս մասին ես կը խօսեմ վարպետ Թրիքի հետ:

Այդ խօսակցութիւնից յետոյ մի շաբաթ չէր անցել՝ Ջէմսը եկաւ մօրը մօտ բոլորովին ուրախացած։

—Մայրիկ, ախր ես գործ եմ գտել վարպետ Թրիթի մօտ. նա ինձ պատուիրել է ռանդել մի ամբողջ դէզ տախտակ, ամեն մինը մի նաքարակիտի, գործի աւարտման համար էլ ժամանակ չի նշանակել։ «Ես, ասում է, տեսել եմ, ինչպէս դու տանը կարդին բանում էիր, յոյս ունիմ թէ ինձ համար էլ կաշխատես»։ Հրամայել է առաւօտեան գնալ։ Մի ամսից աւել ես այդ գործի ետևից քաշ չեմ գալ, իսկ փողը գրպանս կը դնեմ։ Սիրելի մայրս, մի մտածի է՛, չէ՞ որ այդ կը լինի իմ առաջին աշխատանքի պտուղը։

—Դեռ վաղ է քեզ համար փող աշխատելը, քաղցրութեամբ նկատեց մայրը, այնու ամենայնիւ ես ուրախ եմ, որ դու քեզ համար գործ ես գտել։ Ե՞րբ պէտք է գնաս։

—Էգուց առաւօտ, որքան կարելի է վաղ-վաղ։

—Հը, տես, քեզ չը յոգնեցնես աւելորդ աշխատելով։ Երկու—երեք ժամը շատ էլ է տախտակ ռանդելու համար։

—Ինչպէս կարելի է, ես ուզում եմ վեց ժամ անդադար ռանդել։ Երկու ժամում շատ բան կանես։ Վարպետ Թրիթը ով գիտէ կը ծիծաղէ վրաս ասելով. «երևի խեղճ երեխան մօրը կարօտացել է»։

—Ես կարծում եմ վարպետ Թրիթը չի հակառակիլ այն բանին, որ քո հասակի երեխաներին վնաս է մինչ յոգնութիւն բանելը։ Ես համոզուած եմ նոյնպէս, որ նա այդ գործն էլ դիտմամբ է հնարել քեզ համար. հօ դու գիտես թէ ինչպէս նա քեզ սիրում է։ Բայց դու, Ջէմս, չափազանց ինքնասէր ես և եթէ արձակ թողնեն դու պատրաստ ես մինչև ուշաթափ լինելդ աշխատել։

—Ես էգուց կը վերադառնամ տուն երկու կամ երեք ժամից յետոյ, միայն այն էլ այն դիպուածում, երբ ձեռքս վնասած լինիմ կամ երբ հեռացնեն գործից, խիստ և վճռողաբար վերջացրեց խօսքը Ջէմին։

Միւս առաւօտ, պատանի հիւսնը զարթեց մտքում հաստատ դրած, որ վարպետ Թրիթի ատաղձագործի գործարանում օրական վեց ժամից պակաս չը պիտի բանէ և եթէ մայրը տեսնէր նրա խոհուն աչքերը և ամուր

սեղմած շրթունքները, կը հասկանար՝ թէ Ջէմսին անկարելի էր համոզել, որ խնայէ իր ոյժերը։

Վարպետ Թրիթը արդէն սպասում էր իր նոր բանւորին, որին նա հանդիպեց հետևեալ խօսքերով. «վազ զարթնող՝ որսի գնացող թռչնակի համար մի փոքրիկ որդն էլ մեծ բան է» և նշան արաւ ամբողջ դեզ տախտակների վրայ, որոնք պատրաստուած էին նրա համար։ Ջէմսը խկոյն վրայից ձգեց բաճկոնակը, կրծկալը և միայն շապկանց ու կօշտամազ վարտիքով մնաց։ Դարձի էր եկել նա բոբիկ, որովհետև կօշիկներ հագնելը Հարֆիլդի ընտանիքի համար կարելի էր միայն ձմեռ ժամանակ։ Ջէմսը թևքերը յետ ծալեց, վերցրեց ռանդան և սկսեց ռանդել։ Իւրաքանչիւր տախտակը 12 ոտնաչափ երկայնութիւն ունէր և մինչև նրանցից մի տասը ռանդելը՝ ով գիտէ ինչ մըտքեր էին անցնում նրա գլխում, քանի նորանոր ծրագիրներ էին յղանում նրա ուղեղում։ Քրտինքը ոլոռն

—ոլոռն թափվում էր անխոնջ աշխատաւորի ճակատից, իսկ նա շարունակ ռանդում էր, առանց դադրելու։ Վերջապէս արեգակը խոնարհեց դէպի անտառի ծառերի եւրը։

—Վարպետ Թրիթ, ձայն տուեց Ջէմսը, հարիւր տախտակ պատրաստ է, խնդրեմ համարէք։

—Անկարելի բան է, եղբայրս, հարիւր տախտակը չի կարելի այդպէս շուտ պատրաստել։

—Համեցէք ստուգեցէք, իմ հաշուածովս ճիշտ հարիւր է։

—Շատ ապրիս, ուղիղ է, յայտնեց վարպետը, համրելով տախտակները։ Բայց, հոգիս, դա քո հասակի բանւորի ոյժից վեր է։ Խորհուրդ եմ տալիս քեզ վաղը միայն դրա կէսի չափ ռանդել։

—Բայց շատ էլ յոգնած չեմ, ասաց Ջէմսը։

—Բանն նրանում չէ, որ դու հիմա չես յոգնել, կարող է լինել, որ 30 տարուց յետոյ այս օրը թանգ կը նստի քեզ համար։ Ահա ինչից պէտք է վախենալ։

— Եթէ 30 տարի պէտք էր սպասենք, էլ աւելորդ էլ է խօսել յոգնածութեան մասին, ասաց ծիծաղելով Ջէմսը:

— Այո՛ այդ ճշմարիտ է, այդ այդպէս է, բայց այնու ամենայնիւ մարդ իր ուժերը պիտի խնայէ, պնդում էր իր ասածը Թրիքը, հոգեպէս զմայլելով եռանդուտ մանկան վրայ: Այժմս, եղբայր, հարկաւոր է հաշիւ տեսնել. 100 տախտակի համար քեզ կը հասնի 100 կենտ. մեծ աշխատանք է այդ քեզ պէս տղայի համար. դէ՛, տուացիր փողերդ:

Այդ ասելով՝ Թրիքը համրեց 100 կենտ, որ մի դենար է անում, դարսեց գլանաձև կերպով և յանձնեց Ջէմսին, որը հպարտութիւնով դրեց բաճկոնակի գրպանում իր առաջին վաստակը:

Ուրախութիւնից իրան մոռացած Թռաւ երեխան դէպի տուն և բարձրաձայն ինքն իրան կրկնելով՝ 100 կենտ մէկ օրում, հապա փորձեմ 75 օր բանել, ինչպէս այսօր, այն ժամանակ ես վաստակած կը լինիմ այնքան որքան Թոմին կէս տարում: «Ուրա՛» . . .

Ապագայի մեծ մարդը, բոբիկ, կոշտ վարտիքով, բոլորովին կարմրած աշխատելուց, համարում էր իրան այս րոպէիս ամենաբախտաւոր մարդը աշխարհիս երեսին:

— Ա՛հա քեզ, մայրիկ, այս բոլորը քոնն է, կոչեց նա ներս վազելով և թափելով մօր գոգը պղնձէ դրամների շեղջը:

— Ինչպէ՞ս, այս բոլորը իմս է, ի՞նչքան է, հարցրեց մայրը:

— Այստեղ իմ մի օրուայ աշխատանքս է՝ 100 կենտ:

— Դու ամբողջ մի դենար ես վաստակել:

— Այո՛, 100 տախտակ եմ ռանդել:

Մօր լեզուն կապուել էր, ինչպէս այն օրը, երբ Թոմին բերաւ նրա համար 75 դենար: Զգացումների յորձանքները խեղդում էին նրա ձայնը և նա մի բառ անգամ չէր կարողանում արտասանել: Եթէ անդրանիկ որդու հոգատարութիւնը և ուշադրութիւնը լացացրին նրան, ապա ի՞նչ պիտի զգար նա այժմ: Վերկը բանալով նա պինդ սեղմեց կրծքին իր սիրելի Ջէմսին և լուռ համբուրում էր նրան: Երբ սիրտը լիքն է, էլ բառեր հարկաւոր չեն:

IX

Ջմռան մօտ Ջէմսը խիստ յաջողութիւնով վերջացրեց իր գործը Հիւսն Թրիթի մօտ և կարող էր աւելի շահաւէտ պատուէրներ յանձն առնել, բայց որովհետև ձմեռ ժամանակ շինութիւնները կառուցանելը ամեն տեղ դադարեց, ուստի երեխան սրտանց կալաւ դպրոցական պարապմունքներին, չանալով որ մի օր էլ է յետ չը մնայ դասից։

Երբ գարունը եկաւ, տիկին Հարֆիլդի մօտ գալով վարպետ Թրիթը յայտնեց, որ ինքը վարձուած է նրա ազգական Բօյտօնի համար մարագ շինելու և առաջարկում է Ջէմսին գնալ իր հետ որպէս ընկեր վերցրած գործում։ Աւելորդ է ասել՝ որ Ջէմսը ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկութիւնը, բայց մեծ եղաւ իր զարմանքը, երբ իմացաւ թէ՝ տուն կամ մարագ շինելու համար նախ քան գործի ձեռնարկելը, պէտք է յատակագիծ նկարել իմանալ։ Բայց և այնպէս Թրիթը յանձն առաւ նրան այդ բանն էլ սովրեցնել։

—Առանց յատակագծի, Հոգիս, բանուորին չի կարելի մի քայլ անել։

—Մի՛ թէ, խորամանկ ժպիտով հարցրեց Ջէմսը, ապա ես ի՛նչպէս եմ կթում իմ կովերը առանց յատակագծի։

—Ասենք թէ առանց յատակագծի, բայց ո՛չ առանց կարգ ու կանոնի, նկատեց Թրիթը։ Իսկ յատակագիծը միևնոյն կարգ ու կանոնն է։ Փորձիր կովերին չը կթել ինչպէս Հարկն է, կամ իր ժամանակին չը կթել նրանց, կաթը իսկոյն կ՝սկսի նուազել։ Փորձիր արտում պէտք եղածից երկպատիկ աւել կամ պակաս ցանել՝ քան թէ որքան հողն է պահանջում, դու ոչինչ չես ստանալ, և այդպիսով կամ հողը ոյժից կը ձգես և նա ոչինչ չի արտադրի, կամ թէ չէ հունձը յարդ կարտադրէ և դու կը ստանաս միայն չնչին դարման։ Ամեն բանում, եղբայր, հարկաւոր է կարգ։ Եթէ դու առաջուց չը պատրաստես տան յատակագիծը և հաշիւ չ՝անես թէ որչափ քեզ հարկաւոր կը լինի առաւած, մեխ, տախտակ և այլն, այն ժամանակ դու ոչ մի շինուածք չես կարող գլուխ բերել։

Մի քանի երեկոյ իրար ետևից Թրիքրը գծագրութեան և ճարտարապետութեան դասեր էր տալիս Ջէմսին և նա ուշի ուշով զբաղվում էր կերպ-կերպ շինութիւնների մակարդակներ յօրինելով։

Վերջապէս նրանք աւարտեցին մարտգի շինութիւնը և Թրիքրը Ջէմսին վճարեց 20 դենար, ասելով, որ նա բոլորովին բարեխղճօրէն է վաստակել այդ գումարը։

Ձմեռուայ դասերն ուսումնարանում նոյնպէս զուր չ'անցան փոքրիկ Հարֆիլդի համար. նա այդ միջոցում բաւական զարգացաւ. սովորեց տեսակ—տեսակ տեղեկութիւններ, ուշադրութեամբ կարդալով ամեն ձեռքն ընկած դասագիրք, որ երբեմն ապուշ էր կտրեցնում նոյն իսկ իր ուսուցչին։ Տանը յատակի վրայ վառարանի առաջ ամբողջ ժամեր պառկած մի քանի շաբաթ զբաղուած էր Ադամսի թուաբանութեան ընթերցանութիւնով և նրա մէջ եղած խնդիրների լուծումով։ Այնպէս որ նա ամբողջ գիրքը անգիր գիտէր ծայրէ ցծայր։ Բացի Ադամսի թուաբանութեան դասագրքից, Ջէմսը ունէր էլի մի ուրիշ սիրելի գիրք, այն է՝ «Ռօբինզօն Կռուզօի արկածները». նա գլխովին չէր կարողանում յետ կենալ այդ գրքից իր ազատ ժամերում. տասն անգամ կարդացել էր և ամեն անգամ էլ ասելով մօրը թէ՝ այդպիսի հետաքրքիր գիրք աշխարհումս չի կարող լինել։

Ընթերցանութեան միջոցներին նրա մշտական ընկերակիցն էր իր մօրաքրոջ որդի Ուիլեամ Բօյտօնը։ Այդ երկուսը խնդրել էին ուսուցչից, որ ամեռը դպրոցի մի դասարանը ընթերցարան շինեն և ուր նստելով բոլոր ազատ ժամանակ կարդում էին իրանց սիրած գրքերը։

Մօր հովանաւորութեան տակ անցուցած վերջին երկու տարիները մեծ օգուտ տուին Ջէմսին թէ բարոյական և թէ մարմնական զարգացման կողմից։ Նա շատ մեծացաւ. ամրացաւ և դառաւ 14 տարեկան հասակում մի գեղեցիկ պատանի այդ բառի բուն նշանակութեամբ. ոչ ոք նրանից արագ չէր շրջում ու վազում. ոչ ոք չէր կարող նրա պէս ճարպիկութեամբ և բարձր ցատկել։ Ընդհանրապէս՝ նայելով Ջէմսի կազմուածքին, ձևերին, իրան պահելում և պատշաճ խօսելու շնորքին,

նրան կարելի էր 18 տարեկան երիտասարդ մարդու տեղ ընդունել քան թէ 14 տարեկան պատանու։ Նա վայելում էր բոլոր գաղթականների յարգանքը. նրա՝ որպէս պատուական հիւանի, ճարտար գծագրողի և փորձառու երկրագործի, փառքը և համբաւը տարածուել էր շատ հեռու տեղեր և ամեն կողմից զանազան գործակատարութիւնների հրաւէրներ էր ստանում։ Մայրն ակամայ պարծենում էր իր Ջէմսով, սակայն յաճախ նա մտատանջվում էր, համոզուած լինելով թէ այդ վառվռուն և ընդարձակ գործունէութեան փափագող բնաւորութեան համար խիստ անձուկ է «փայտաշէն խրճիթը», անտառը և ընտանեկան նեղ շրջանը։ Արծուիկը ճգնում էր սլանալ ծնողական բնից, նոր կեանքի նախագծեր էր ստեղծում նոր երկիներում, նոր մարդկանց մէջ։ Մօրը վախ էին պատճառում փառասիրութեան այդ նշոյլները։

— Մի՛ շտապիր, զաւակս, ասում էր նա յաճախ Ջէմսին, երբ սա իրան յատուկ ոգևորութեամբ հաղորդում էր նրան իր յոյսերը ընտանիքի ապագայ փայլի մասին։ Մի՛ շտապիր, Տէրը ինքը կը ցոյց տայ քեզ ճանապարհը դէպի նոր աշխարհ. սպասի՛ր Նրա հրամանին։

Եւ հնազանդ որդին, զոհ մնալով հիւանի պաշտօնից, հոգատարութեամբ վարում էր տնային գործերը և շարունակում իր մտաւոր զարգացումն ուսումնասիրանում։

X

— Տիկին Հարֆիլդ, գիտես, ես դարձեալ եկել եմ Ջէմսի ետևից, ասաց մի օր դրացի գաղթական պ. Սմիթը, մտնելով «փայտաշէն խրճիթը». անանուխի քաղհանի ժամանակն է, իսկ ես առանց ձեր որդուն չեմ կարող այդ կատարել։

— Ջէմսը ուրախութեամբ ձեզ կօգնէ պատասխանեց տիկին Հարֆիլդը. միայն կարծեմ այժմ նա խիստ զբաղուած է հանդում։

— Չի՛ կարելի արդեօք, որ գոնէ երկու—երեք օր գար ինձ համար. այդ ինձ համար շատ բաւական է, պատրաստ է արդէն քսան քաղհանող տղամարդ։

—Այդքանը բաւական է, դուք կարող էք առանց Ջէմսի էլ աւարտել։

—Աւելի լաւ է ասէք չափազանց շատ է, ասաց Սմիթը, սակայն առանց նրան ես ի՛նչ կարող եմ անել. նա նրանց լոլորին իր կամեցածին պէս աշխատեցնում է։

—Այդ նոր բան է ինձ համար, նկատեց ժպիտով տիկին Հարֆիլդը։

—Ես ձեզ ասում եմ, այդ ճիշտ է. պէտք է տեսնէք ինչպէս նա կառավարում է բանուորների խումբը, անդադար զուարճացնում է նրանց, պատմում է զանազան պատմուԹիւններ, անեկդօտներ, իսկ ինքը բանում է ամենից ժիր ու ճարտար։ Ուրիշները նրան շրջապատում են, որ նրա խօսքերից ոչինչ բաց չը Թողնեն. երեխաների խելքը գնում է նրա համար։ Ես պատրաստ եմ նրան աւելի վճարել, միայն Թէ նա համաձայնէր ինձ մօտ գալ։

—Լա՛ւ, գնացէք, ինքներդ խօսեցէք այդ մասին Ջէմսի հետ, ասաց մայրը. ես անձամբ դրա դէմ չեմ։

Սմիթը Օգիօ գաւառում յայտնի էր ինչպէս գըլխաւոր անանուխ հայԹայԹողը շրջակայ շուկաների համար։ Անանուխը պէտք է առանձին զգուշուԹեամբ քաղուի, ուստի Հողագործը ծախս չէր խնայում գործնոնը խմբերով տղաներ վարձելու համար։ Ջէմսը շատ անգամ էր բանել նրա պարտէզում, նա մեծ շնորհք ուներ զուարԹ պահել ընկերներին այդ յոգնեցուցիչ և տխուր զբաղմունքի մէջ. նա գրաւում էր նրանց իր գեղեցիկ խօսակցուԹեամբ, ներկայացնումէր զանազան ծիծաղաշարժ պատկերներ կամ Մօրղի աշխարհագրուԹիւնից զանազան նկարագրական հատուածներ էր պատմում, որի համար բանուորները կուրօրէն հնազանդվում էին Հարֆիլդին։ Այս անգամ էլ նոյնը եղաւ։ Հէնց որ Սմիթը Ջէմսին բերեց, գործը կենդանուԹիւն ստացաւ, այնպէս որ երկու օրուան մէջ անանուխի ածուները բոլորովին մաքուր քաղհանած էին։

«Փայտաշէն խրճիթից» տասը վերստ հեռաւորուԹեան վրայ՝ Կլեւելանդից ոչ հեռու, կառուցանվում էր մի մեծ շէնք կալաքարի գործարանի համար։ Կապալառու

—Հիւսն Թրիքը վեր առաւ այդ գործը, և այստեղ ի հարկ է առանց Ջէմս Հարֆիլդի բան չէր լինի։ Թրիքը հրաւիրեց նրան մասնակցել շինութեան գործում։ Նրա քաղաքավարի վարմունքը, սրամտութիւնը և առաւել ևս նրա ուրախ բնաւորութիւնը հիացրին գործարանատէր Ծերունի Բերտօնին։

—Է՛կ, իմ գործարանում աւազ բանուոր եղիր, ասում էր նա անդադար պատանի Հիւսնին։ Շատ սըրտովս ես եկել դու։ Է՛կ, չես զղջալ։

—Եթէ մայրս թոյլ կը տայ, կը գամ. առանց նրա կամքի ես ձեզ մօտ տեղ չեմ ընդունիլ, պատասխանեց Ջէմսը։

—Այ, դրա համար առաւել սիրեցի քեզ, ասաց Ծերունին, հէնց այդպիսի մարդ է ինձ հարկաւոր։

—Ո՛րքան ժամանակ ես ձեզ պէտք կը լինիմ։

—Կուզես ամբողջ կեանքումդ ինձ մօտ կաց, կը պահեմ։ Ամիսը տասնչորս դենար կը տամ, երկու դենարով աւելի քան միւսները. միայն թէ գաս։

Տասնհինգ տարեկան հասակում հիմնաւոր պաշտօն ստանալը, չը լսուած բան էր այն ժամանակուայ գաղթականների մէջ։ Մի թէ մեծ բան չէ տարեկան 168 դենար հաստատ ռոճիկը։ Այսպիսի ձեռնտու գործի մասին մտածելիս Ջէմսը ուրախութիւնից համարեա թըռչկոտում էր։ Տուն դառնալուն պէս, ի հարկ է, նրա առաջին գործն եղաւ մօր կարծիքը հարցնել։ Մօրը շատ դիւր չ'եկաւ համարձակ տղայի այդ նոր ձեռնարկութիւնը։ Բերտօնը թէպէտ բարի մարդ էր, բայց տգէտ էր և նրա տնային կենցաղավարութիւնը քիչ երտարբերվում քաղաքիմանը առևտրականների կացութիւնից։ Բայց գլխաւոր բանը, որ դիւր չ'եկաւ տիկին Հարֆիլդին՝ այդ նոյն իսկ գործն էր, որովհետև կալաքարի պատրաստութեամբ պարապում էին ստորին կարգի բանուորները, և Ամերիկայում առհասարակ զզուանքով էին նայում այդ արհեստի վրայ։ Սակայն կարիքը այդ չէ հարցնում։ Համեմատաբար աւելի բարձր վճարը նիւթական կողմից շատ օգտակար էր աղքատ բանուորների համար և քնքոյշ մայրը սրտի կսկիծը թաքցնելով ստիպուած եղաւ իր համաձայնութիւնը տալու։

—Ձար չէկայ, ընդունիր այդ տեղը Բերտօնի մօտ, ասաց մայրը. միայն լաւ իմացած կենաս, որ դու պէտք է լինես բոլորովին այլ կերպ ընկերակիցների մէջ, որոնք նման չեն նրանց, որոնց հետ մինչ օրս ապրել ես։ Դու կը լսես և կը տեսնես այն, ինչ օր մինչև այժմ ոչ լսել, ոչ տեսել ես քո հայրական տանը։ Պահպանիր Հոգուդ մաքրութիւնը և չը գրաւուիս նրանց վատ օրինակներով։

Դրանից յետոյ առաջի երկուշաբթի օրը Ջէմսը մտաւ իր նոր տիրոջ մօտ։ Գործարանը անչափ ցեխոտ էր, և կալաքարի բանն էլ բացի ցեխից ոչինչ չ'ունէր։ Բերտօնը հիացմամբ ընդունեց Հարֆիլդին և իսկոյն ցոյց տուեց մի խուց, ուր նա գիշերելու էր։ Բայց ցեխոտ գործով Ջէմսը շատ չէր զբաղվում. բացի դրանից նրան էին յանձնել գանձասպահի և հաշուապահի պաշտօնը։ Նա էր ստանում գանազան անտառներից բերած կաւը, հաշիւ տեսնում գնողների հետ և վճարում էր բանուորների ռոճիկը։ Նա ամենից առաջ էր գալիս գործարան և ամենից վերջը գնում։ Ընդհանրապէս նա այնպէս էր վերաբերվում դէպի այդ գործը, որ, կարծես, գործարանը պատկանելիս լինէր իր հարազատ հօրը։ Հասկանալի է, որ ծերուկ գործարանատէրը անսահման կերպով հաւատում էր նրան և ծննդական քնքշութեամբ էր վարվում նրա հետ։

Մէկ անգամ մի նոր գաղթական մի բեռը կաւ բերեց ասելով.

—Ստացէք, այստեղ 25 չեփվերիկ է։

—Թող առաջ ես ինքս չափեմ, ապա փոյլը տամ, հանդիստ կերպով պատասխանեց Ջէմսը, որը հէնց առաջին օրերից նկատել էր թէ ինչպէս ծերունի գործարանատիրոջը շատ են խաբում կաւ կրողները։ Ինչքան էլ գաղթականը ուզեց ընդդիմանալ, սակայն Հարֆիլդը՝ որի աչքը արդէն վարժուել էր բերած նիւթերի քանակութիւնն իմանալ, պինդ կանգնեց իր ասածի վրայ թէ՝ բեռը 22 չեփվերիկ է և ոչ թէ 25։ Բանը վերջացաւ նրանով, որ վաճառողը խոստովանեց իր մեղը և միայն 22 չեփվերիկի փողն առաւ։ Ծերունի գործարանատէրը, պատահմամբ ներկայ գտնուելով այդ հաշուետեսութեանը, աւելի ևս սիրեց իր երիտասարդ օգնականին։

Ջէմսը գործարանում բանեց ամբողջ ձմեռը, գարնան սկզբներում ինքը բախտը դուրս բերեց նրան այդ կացութիւնից, որ շատ էլ նրա սրտովը չէը. նրա առաջ բացուեցաւ նոր և աւելի լայն ասպարէզ։

Իսկապէս Ջէմսի ազնիւ ինքնասիրութիւնն էր, որ առաջին զարկը տուեց նրա կեանքի այդ կարևոր շրջանին։ Բերտօնը մի աղջիկ ունէը, որը բաւականին քաղաքավարի էր դեպի իր հօր սիրելի բանուորը. բայց մի անգամ օրիորդը վշտացաւ թէ՝ ինչու Հարֆիլդը չափազանց երկար է զբաղվում թուաբանական խնդիրներով հասարակաց սենեակում կրակի մօտ։ Ջունն էր տանում օրիորդի, թէ Ջէմսի պարզ վարմունքը նրան վրդովեց, միայն նա չը համբերեց և երբ իր մայրն ու հայրը գնացին իրանց ննջարանը, աղջիկը մօտեցաւ թուաբանական հաշիւների մէջ խորասուզուած Հարֆիլդին և կոչեց.

—Ի՞նչ ես վայր ընկել. վարձկան ծառաները վաղուց պէտք է քնած լինին։

Ջէմսը կատաղեց. սակայն լռեց, առաւ ճրագը և համարեա դուրս փախաւ սենեակից, դողալով սաստիկ բարկութիւնից։

—Ես վարձկան ծառայ եմ, հա, ասում էր նա ինքն իրան քայլելով իր սենեակում։ Ի՞նչպէս նա համարձակուեց ինձ այդպէս անուանել, մի աւելորդ րոպէ այստեղ չեմ մնալ. վաղը և երէ կերթամ։ Ես նրան ցոյց կը տամ, թէ ես ինչ ծառայ եմ։ Վարձկան ծառայ . . . Կարելի է հանճաք է անում. բայց ես ծառաները կունենամ, իսկ ինքս ոչ մէկին ծառայ չեմ դառնալ։

Ամբողջ գիշերը Հարֆիլդը յուզման մէջ անցկացրեց, այժ չ'ունենալով սառնասրտութեամբ տանել տանտիրոջ աղջկայ յանդուգն վարմունքը։ Հէնց որ լուսացաւ՝ իր ունիմ չ'ունիմը հաւաքեց և գնաց Բերտօնի մօտ հաշիւ տեսնելու։

—Ես ձեզանից դուրս եմ գալի, կարճ և պարզ յայտնեց գործարանատիրոջ։

Երէկ ծերունու ճակատին սարճանակ բռնէին, հազիւ թէ նա այնքան շփոթուէը, ինչքան այդ խօսքերից։

—Դուրս ես գալի, ի՞նչպէս, ինչո՞ւ, կմկմաց նա։

—Այո՛, գնում եմ, պատճառ մոխրաջուր եփելուց զզուել եմ։

Ջէմս, այդ չէ, չեմ հաւատում, կոչեց Ծերունին յուսահատուած։

—Ես ձեզ ասում եմ, որ այդպէս է, պատասխանեց Ջէմին, ոչ մի բառով չ՝ակնարկելով իր կրած վիրաւորանքի մասին։

Բանը նրանով վերջացաւ, որ Բերտօնը հաշիւ տեսաւ, իսկ Հարֆիլդը մօտ կէսօրին արդէն իրանց «փայտաշէն խրճթումն» էր։

XI

—Վերջապէս ես տանն եմ, բացականչեց Ջէմին մտնելով խրճիթ մօրը մօտ, հերիք է, որչափ մոխրաջուր եփեցի։

—Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս, Ջէմի, ասաց տիկին Հարֆիլդը. բայց ի՞նչ է պատահել. ի՞նչու այդպէս շուտ դարձար։

—Ինչ որ էլ պատահած լինի, մայրիկ, ես աւելի լաւ համարեցի տանը մնալ և ինձ համար մի ուրիշ գործ ճարել, քան թէ «ուրիշներին ծառայել»։

—Այդ ի՞նչ է նշանակում—կոչեց մայրը,—գուցէ քո ու պարոն Բերտօնի մէջ որ և է անբաւականութիւն է պատահել։

—Ոչ մի անբաւականութիւն. պարոն Բերտօնը վարելի մարդ է. անձամբ նրա հետ գործ ունենալ շատ հաճելի է։

—Ուրեմն ի՞նչ է դժգոհութեանդ պատճառը. արդեօք քեզ քի՞չ է վճարում։

Մօր հարցից յետոյ Ջէմին մի առ մի պատմեց նրան այն ամենը ինչ որ պատահել էր նախընթաց երեկոյեան։

—Ահա 56 դեներ աշխատանքս, մայրիկ, վերջ տուեց նա խօսքին, մատուցանելով մօրը մի կապոց դրամ, ահա, այս քոնն է։

—Փողիդ համար շնորհակալ եմ, տանը շատ պէտք կը գան, պատասխանեց մայրը, որ շարունակ լուռ լսում էր մանուկին։

—Բայց շուտ չէ՞ր պարոն Բերտօնի մօտ գործիդ թողնիլը, արդեօք չը շտապեցիր։

—Շտապել եմ թէ չեմ շտապել, միայն իմ բանը նրա հետ վերջացած է. ափսոս էր, ի հարկէ, մերժել մի շահաւէտ պաշտօն, բայց այլ ևս յետ չեմ դառնալ։

—Երևակայում եմ թէ ինչպէս պարոն Բերտօնը վշտացած պէտք է լինի. նա միշտ հետդ քաղցր Իր վարմամբ և ուշադիր էր դէպի քեզ, նկատեց տիկին Հարֆիլդը։

—Այո՛։ Միայն ինձ այնպէս է երևում թէ՝ քեզ համար նշանակութիւն չ՚ունի, որ նրա ապերասան աղջիկը ինձ անարգեց։

—Նրա վրայ ես իսկի ուշ էլ չէի դարձնիլ, և բացի այդ, ես նրա խօսքերի մէջ անարգական ոչինչ չեմ գտնում. անպատուութիւն չէ «վարձկան» կոչումը, մանաւանդ քեզ համար, որովհետև դու եղել ես ընտիր ծառայ։

—Բանը դրանում հօ չէ, մայրիկ. ես ամենևին անպատուութիւն չեմ համարում վարձով ծառայելը, բայց ինձ վշտացրեց նրա ասելու այն ձևը, որով ինձ նկատողութիւն արաւ։ Բերտօնի աղջիկը յայտնի կերպով կամեցաւ ինձ ստորացնել։ Ես այդ վայրկենից ինձ խօսք եմ տուել մարդկանց շարքն ընկնել և կը հասնեմ ուզածիս։

—Շատ գեղեցիկ, սիրելիդ իմ, միայն այն էլ աւելացրու՝ եթէ Աստուած կօգնէ, նկատեց մայրը։

—Ես նոր գործ կը գտնեմ, ասաց Ջէմսը։

—Ուրեմն դու տանը չես մնալու։

—Ո՛չ։ Օտարութեան մէջ աշխատանքը միշտ առատ է լինում։

—Արա՛, ինչպէս գիտես, միայն թէ քեզ համար լաւ լինէր, ես համոզուած եմ, որ դու ոչ մի տեղ չես կորչիլ։

—Գիտե՞ս ինչ կայ, մայրիկ,—վախվախելով արտասանեց Ջէմսը,—ես շատ կը ցանկայի ծովային ծառայութիւն մտնել։

Տիկին Հարֆիլդին եթէ յանկարծ ապտակէին գուցէ այնքան չը վախենար, ինչքան որդու այդ խօսքերից։

—Ջէմս,—կոչեց նա գոյնը թռցնելով,—ո՞րտեղից դու այդ բանը մտածեցիր. ես ամենևին չեմ համաձայ-

նիլ. ինչ որ կուզես, եղիր ձիթահան, կպրագործ, բայց նաւաստի—երբէք:

—Պատճառ, մայրիկ:

—Որովհետև դու ծովագնացութեան դիմելով ամենևին մարդու կարգ չես մտնիլ:

—Ընդհակառակը, ժամանակով ես կարող եմ դառնալ նաւավար, ով գիտէ գուցէ և ամբողջ նաւի տէր:

—Եթէ չես ուզում քո մօրը վշտացնել, էլ բերան մի բանայ բոլորովին ծովային ծառայութեան մասին, ինձ մի թշուառացնիլ, վերջացրեց տիկին Հարֆիլդը:

Դրանով էլ ընդհատուեց խօսակցութիւնը:

Ջէմսը գնաց ագարակը վերահասու լինելու իրանց անտեսութեանը և մի քանի օրուայ ընթացքում կարգի բերեց այն ամենը, ինչ որ բացակայութեան միջոցին բաւական քայքայուել էր: Նրա աւագ քոյրը՝ Խետան արդէն ամուսնացած էր և ապրում էր Նեիւ-Բուրգում: Յանկարծ տեղեկութիւն ստացուեց քեռի Բօյտօնից, որը նոյնպէս Նեիւ-Բուրգումն էր կենում, թէ նրա սեպհական բաժին անտառի համար հարկաւոր է փայտահատներ և սղոցաւորներ. նա հրաւիրում էր իր մօտ Ջէմսին, առաջարկելով նրան յանձն առնել կապալով կամ տախտակ սղոցելը, կամ փայտ կտրելը: Այս բանի վրայ տիկին Հարֆիլդը շատ ուրախացաւ, նրան թւում էր, թէ այդ նոր գործը որդու միտքը կը դարձնէ նաւաստի լինելու վտանգաւոր բաղձանքից և շուտով պատրաստութիւն տեսաւ Ջէմիին Նեիւ-Բուրգ ճամբելու, ուր նրա ապրուստը թանդ չէր նստելու, որովհետև քոյրը ուրախութեամբ կընդունէր նրան իր մօտ: Ձիշտ երեք օրից յետոյ առաւօտեան պատանի Հարֆիլդը բախում էր Նեիւ-Բուրգում իր քեռու դուռը: Նա այդ ճանապարհը ոտով գնաց:

—Բարով, Ջէմի, ասաց քեռին ուրախ ուրախ, անկեղծօրէն սեղմելով նրա ձեռքը: Եղբայր, ամմա դու էլ բարձրացել ես հա, և ինչպէս էլ ամրապնդուել ես, դու կատարեալ տղամարդ ես դառել. կտրելու ու սղոցելու գործ շատ կայ իմ անտառում, միայն չը գիտեմ քո սրտովն է փայտահատի զբաղմունքը:

Ջէմսը յայտնեց, որ ինքը փայտահատութիւնով ե-

բէք պարապած չէ, բայց իբրև սղոցաւոր արդէն վարձուած է եղել և գործի հետ էլ լաւ ծանօթ է, թէպէտ ուղիղն ասելով՝ սղոցելը աւելի յոգնեցնում է մարդու քան փայտ կտրելը։

—Դէ՛ ձեռքդ տուր, ասաց քեռին, իւրաքանչիւր հարիւր ծառից մի սաժէն փայտի համար ինձանից կը ստանաս 50 կենտ. քանի՞ օր պէտք է բանես, որ 50 դենար աշխատես.

—Յիսուն օր, շտապով պատասխանեց Ջէմսը։

—Է՛հ թէև մի քիչ շատ է, ծիծաղելով ասաց քեռին. հասակաւոր փայտահատի ձեռքովը կը գայ այդ գործը, բայց իսկն ասել դու դեռ մանուկ ես։

—Ես համարձակ կարող եմ ասել, որ օրը երկու սաժէն փայտ կը կտրեմ, յայտնեց Ջէմսը։

—Տղայ կասեմ եթէ գլուխ հանես այդ, ձայնեց քեռին։ Սակայն արմանալու բան չը կայ, դու իմ բանւորներից շատից բարձր ու թիկնաւէտ ես։

Քեռու հետ գործը վերջացնելով Ջէմսը վազեց քրոջ մօտ, որը շատ ուրախացաւ, իսկոյն տանը առանձին սենեակ նշանակեց նրա համար և այդ օրից Հարֆիլդը Խետալի տանն էր ճաշում։

Յաջորդ օրը կացինը ձեռքին Ջէմին յայտնուեց ինչպէս փայտահատ անտառի ծայրին էրիօ լճի մօտ։ Բայց հէնց այս տեղ նրան սպասում էր խելքից հանող հրապուրանքը,—կապոյտ ալիքները, ահագին ջրային տարածութիւնը շրջապատուած հինաւուրց ծառերով, անց ու դարձ անող անթիւ լաստերը և մակոյկները, այս բոլորը տակն ու վրայ արին երիտասարդ Հարֆիլդի հոգին, որ հազիւ նոր կարողացել էր քիչ մի չ մարել իր մէջ դէպի ծովային կեանքը ունեցած բաղձանքները և չէր կարծում թէ փորձանքը այդքան մօտ է։

Հրապուրանքը այն աստիճանի էր, որ մշտական աշխատասէր Ջէմսը ամբողջ ժամերով սկսեց նայել հրաշագեղ տեսարանի վրայ, որ նրա հոգու մէջ յարուցանում էր այն հին տպաւորութիւնները, որոնց նա քաղել էր ծովային վիպասանութիւնների ընթերցանութիւնով։

—Վաղ թէ ուշ ես կը նաւեմ այդ լճի վրայ, մտա-

ծում էր նա ինքն իրան և նստած լճի ափին մի կոճղի վրայ առագաստներն էր համարում, որոնք հեռուում երևալով անցնում էին ինչպես ձկնաքաղեր։

Բոյտոնի փայտահատների մէջ կար մի նժդեհ դերմանացի, մի խելօք, առոյգ երիտասարդ, որ խօսում էր աղաւաղեալ անգղիերէն լեզուով։ Ջէմսին այնպէս էր երևում թէ դերմանացին գործը լաթով է բռնում, և որ նա իբր թէ կացին բանեցնել չը դիտէ։ Սակայն որչափ եղաւ իր զարմանքը, երբ բանից երևաց, թէ մի շաբաթուայ ընթացքում ինքն ու դերմանացին հաւասար էին կտրել. այսինքն իւրաքանչիւրը օրական ճիշտ երկու սաժէն։

Ջէմսի բախտից Խետայի տանը կային լաւ լաւ գրքեր և լրագրեր, որոնցով նա շատ լաւ ժամանակ էր անց կացնում երեկոյեանները և չէր էլ մտածում քաղաքային զբօսանքների մասին, որոնք խիստ գրաւում էին նրա միւս ընկերներին։

Ուղիղ 50 օրից յետոյ Հարֆիլդը իր քեռուն հարիւր սաժէն կտրատած փայտ յանձնեց և փոխարէն ստացաւ 50 դեներ։

Քեռին հրաժեշտ տալով Ջէմիին ասաց՝ յոյս ունիմ թէ դու քեզ չես նուիրիլ փայտահատի պարապմունքին, թէպէտ և օգտակար զբաղմունք է. բայց ես ենթադրում եմ թէ դու այլ նպատակներ ունիս՝ է նկատի։ Դու դուցէ կը յանկանայիր մի որ և է բարձրագոյն դպրոց մտնել կրթուելիւնդ կատարելագործելու համար։

—Ի հարկ է, քեռիս, պատասխանեց Ջէմսը, սակայն այդ վայրկեանին նրա լեզուի ծայրին էր այս խօսքը՝ «այո՛, բայց առաջ ես կը կամենայի մի քիչ նաւել ծովի վրայ», միայն նա չը վստահացաւ ասելու։ Նա գիտէր որ քեռին խիստ կը զայրանայ այդ սրտաբացուկով, ուստի և լաւ համարեց լռել։

(Կը շարունակուի)։

Ն. ՏԷՐ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Ա Շ Ն Ա Ն Տ Ե Ր Ե Ւ Ն Ե Ր

Աշնան սկզբին մի բարակ քամի
Սարիցը եկաւ դաշտերը իջաւ,
Վստմց, փսփսաց մի բան ամենքին
Ու անցաւ գնաց անտառը մտաւ.

Խոտը չորացաւ, Հողը ցամաքեց,
Այստեղ ու այնտեղ բացուեցին ճեղքեր,
Անտառը դողաց ու վախից իսկոյն
Դեղին գոյն առան կանաչ տերևները.

Շատ օր չէր անցել, ահա նոյն քամին
Սլսլաց նորից, մտաւ մերկ դաշտեր.
Բերեց, հաւաքեց, դէպ երկինք քշեց
Աւազն ու փոշին ու չորցած խոտեր:

Մտաւ անտառը. շաղհարեց ծառեր,
Թափեց տերևը, աչ ու ձախ փռեց,
Փչեց ու ձգեց թէ սար և թէ ձոր
Ու իրանց բուսած տեղից զրկեց:

Բայց ինչքան արաւ չը կարաց քամին
Պոկել մի տերև եղևին ծառից,
Որ ժայռի միջից նայում էր կանաչ
Նոր ոստ, նոր տերև բուսած կողքերից:

Կ. Կ. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

Սեպ. Փարիզ:

ՕԴԱՊԱՐԻԿԻ ՀՆԱՐՈՂՆԵՐԸ

Տասնեւեօթերորդ դարի վերջերում, ուրեմն մեզանից 200 տարի առաջ, Պօրտուգալիայում ապրում էր մի մարդ, որի ազգանունն էր Հուսմաօ։ Նա ոչ հարուստ էր, ոչ գիտնական և ոչ էլ լաւ կրթուած, սկայն թէ ուսումնարանում փոքր ի շատէ ծանօթացել էր բնական գիտութիւնների հետ և այնպէս սկզում էր այդ գիտութիւնը, որ ուսումնարանից դուրս գալուց յետոյ էլ նա շարունակում էր պարապել դրանով։ Հուսմաօն շատ անգամ գ'այլուած Թռչուններին սլանալովը մտածում էր՝ մըթէ չէ կարելի մի այնպիսի միջոց գտնել, որ մարդն էլ կարողանար Թռչել օդի մէջ, և այդ միտքը այնպէս զբաղեցնում էր նրան, որ նա ձեռք բերեց այն բոլոր գրքերը, որոնք երբ և իցէ գրուած էին օդի մէջ Թռչելու փորձի վերաբերութեամբ։ Բայց այդ գրքերից նա չը կարողացաւ օգտուել որ և իցէ տեղեկութիւնով. նրանից առաջ եղած հնարողներից շատերը առաջարկում էին արուեստական Թևեր, իսկ մի քանիսն էլ այդ փորձը անելիս չինովի Թևերի վրայ յոյս դնելով կամ կեանքից էին զրկուել կամ բարձրութիւնից հողի վրայ ընկել և վնասուել։ Իրաւ է նա կարդաց և այնպիսի հնարողների գրուածքները որոնք բաւական յաջողութիւնով կատարուել էին այդ փորձը նրանց չինովի Թևերով, բայց այդ պատմութիւնները այնքան անորոշ էին, որ կարելի էր կասկածել այդ փորձերի երբ և իցէ իրականապէս կատարուած լինելու վրայ, բացի այդ, նրանք ոչինչ օգուտ չէին կարող բերել հետաքրքրուողներին, որովհետև պատմում էին Թէ՝ այս ինչ մարդը Թռել էր օդի մէջ, բայց Թէ ինչպէս էին շինուած նրա Թևերը և ինչպէս էին նրանք ներգործում, այդ ամենի բացատրութիւնը մնում էր միայն հանելուկ ընթերցողի համար, ուրեմն միևնոյն էր Թէ պէտք էր նորից մտածել և նորից հնարել։

Մի անգամ Հուսմաօն խորը մտածմունքի մէջ անց ու դարձ էր անում իրա սենեակում և մեքենայաբար մօտենալով լուսամուտին, նայեց այգու մէջ և յանկարծ տեսաւ մի փոքրիկ, Թեթև գընտակ, որ շրջում էր օդի մէջ, այդ գնտակը գազից ուռցրած փամփուշտ էր, որ մի որ և իցէ երեխայ բաց էր Թողել զուարճութեան համար։ «Ահա, ասաց նա ինքն իրան, փոքրիկ գնտակը Թռչում է օդի մէջ. բայց մըթէ մեծն էլ չի կարող Թռչել նոյնպէս». և ահա այն ժամանակից սկսեց նա չինել Թղթից և ուրիշ նիւթերից փոքրիկ գնտակներ

և նրանց մէջ գազ լքցնելով, որովհետև գազը աւելի թեթև է քան թէ օդը՝ բաց էր թողնում օդի մէջ։ Առաջին անյաջողութիւնները չէին վհատեցնում նրան, նա մինչև կամակորութեան հասած աշխատում էր իրագործելու իր միտքը և վերջապէս հասաւ նպատակին. գունտը շատ բարձրացաւ օդային տարածութեան մէջ։

Այսպէս անընդհատ շարունակելով փորձերը, Հուսմաոն սկսաւ աւելի մեծ գունտեր պատրաստել, այնպէս որ նրանք կարողանային իրանց հետ ծանրութիւններ էլ բարձրացնել, և վերջապէս շատ երկար փորձերից յետոյ նրան յաջողուեց շինել առաջին օդապարիկը։ Այդ օդապարիկները հետագրգրեցին դրացիներին, նրանք այդ լուրը տարածեցին բոլոր քաղաքում, այնպէս որ նրա տան մօտ միշտ հաւաքվում էր ամբոխը և նայում գնտերի բարձրանալուն, Այս հնարագիտութեան լուրը այնպէս տարածուեցաւ. որ մինչև Յովհաննէս Թագաւորի ականջին էլ հասաւ։ Թագաւորը կանչեց Հուսմաօին Լիսաբօն քաղաքը. նա ներկայացաւ Թագաւորին և բերեց իրա հետ մի մեծ օդապարիկ, որով վճռել էր առաջին անգամ օդում բարձրանալ։

Նշանակուած օրուայ առաւօտից ամբոխը հաւաքուել էր Լիսաբօնի դլխաւոր հրապարակի վրայ, ուր Թագաւորական պալատն էր։ Բազմութիւնը հետզհետէ այնքան հաւաքուեց, որ հագիւն հրապարակում տեղ չը գտնելով խռնուել էր մօտակայ փողոցներում։ Այստեղ ոչ թէ միայն Լիսաբօնի բնակիչներն էին, այլ շրջակայ տեղերից էլ եկել էին նայելու մինչև այդ ժամանակ չը տեսուած երևոյթը, թէ ինչպէս մարդը պէտք է բարձրանայ օդի մէջ։ Թագաւորն ու նրա ազգատոհմը տեղաւորուած էին նրանց համար առանձին պատրաստած բազմոցներում։ Հուսմաօն նստեց մակոյկի մէջ և նշան տուեց, որ քանդեն պարանի կապը։ գունտը սկսաւ կամաց—կամաց բարձրանալ, նրան ուղեկցում էին անհամար աղաղակներ ու ծափահարութիւնները։ Մի քանի սաժէն բարձրացած նա կանգ առաւ օդի մէջ՝ պատճառ պնդացրած լինելով պարաններով նա միայն կարողացաւ այնքան բարձրանալ, որքան թոյլ էին տալիս պարանների երկարութիւնը։ Առաջին փորձը կատարուեցաւ այսպէս, պատճառ Հուսմաօն չէր վստահանում ազատ թռչել, քանի որ գունտը չունէր այն բոլոր կատարելութիւնները, որ յետոյ տուեցին նրան։ Նոր էր կանգնել գունտը օդի մէջ, երբ սաստիկ քամին ծռեց նրան մի կողմ Թագաւորական պալատի ուղղութիւնով, գունտը խրփուեց տանիքին, քարշ ընկաւ նրանից և պատռուեց, բայց ոչ մի անբախտութիւն չը պատահեց, պատռուած գունտը կամացուկ ցած ընկաւ հողի վրայ։ Ահա այսպէս վերջացաւ օդային ճա-

նապարհորդութեան առաջին փորձը. միայն հարկաւոր էր կատարելագործել նրան և երկրորդ փորձը անշուշտ յաջողակ կը լինէր, բայց ըստ մեծ մասին անհանգամանալի է եղել հնարագէտների վիճակը։ Նրա նախանձորդները գըրգռեցին ամբոխը Հուսմաօի դէմ՝ սկսեցին սուլել, ծիծաղել նրա վրայ, նրան մականունեցին «Թռչող մարդ». մինչև այն աստիճան հասաւ այս վարմունքը, որ ողորմելի Հուսմաօն իրա նըշանաւոր հնարագիտութեան համար այպանուած, հալածուած, ոտիպուտեցաւ Թողնել իրան հայրենիքը և տարագրուիլ օտար երկիր։ 1724 Թուին նա մեռաւ միայնակ օտարութեան մէջ, չունենալով այնքան միջոց՝ որ կրկնէը իրա առաջին փորձը և կատարելագործէը շատ տարիների աշխատութիւնը։

Մեռաւ Հուսմաօն ոչ ոքի չը բացատրած իր հնարագիտութեան գաղտնիքը։ Ոչ ոք չ'կրնացաւ թէ ինչով էր լքցվում և ուռչում նրա օդային գունտը և թէ ինչ նիւթից էր նա շինուած։

Նրա փորձերի մասին տեղեկութիւն ստացանք շատ ժամանակից յետոյ։

Օդագնացութեան առաջին փորձից յետոյ ամբողջ հարիւր տարի անցաւ. Հուսմաօի գիւտն ու փորձերը մոռացուեցան անգամ իր հայրենիքում — Պորտուգալիայում, իսկ ուրիշ երկիրներում հօ չէին լսել երբէք. բայց օդային Ճանապարհորդութեան գիւտն անելու մտքով շատերն արդէն զբաղուած էին։ 1782 Թուին Յովսէփ ու Էդին Մօնգօլֆիէր երկու հարազատ եղբայրները, որոնք ապրում էին Ֆրանսիայում, նորից հնարեցին օդապարիկը։ Բայց որքան պանագանութիւն կար առաջին և երկրորդ հնարողների բաստի մէջ։ Հուսմաօի ծագումի ու կեանքի մասին ոչինչ յայտնի չէ մեզ, նրա փորձերի մասին մենք ամենաչնչին տեղեկութիւն ունինք, այն ինչ Մօնգօլֆիէր եղբայրների մասին յայտնի են անգամ ամենաչնչին մանրամասնութիւնները։ Առաջին հնարողի վարձատրութիւնը մի այն ծիծաղն ու հեգնութիւնը եղան և հալածուեց իրա հայրենիքից, մինչև իսկ նորից այնտեղ վերադառնալու համարձակութիւն անգամ չ'ունենալով, այն ինչ երկրորդ հնարողները մինչև իրանց կեանքի վերջը օգտուեցան առանձին յարգանքով, և նրանց հնարագիտութեան յիշատակի համար Փարիզեան գիտութիւնների ակադեմեան 'ի պատիւ նրանց մի դ ա լ կտրել տուեց և մինչև մահը ապահովացրեց նրանց արդէն ապահով գոյութիւնը։ Կարեկցութեան արժանի Հուսմաօի անունն ու նրա փորձերը մոռացուեցան բոլորովին և թէև միայն վերջին ժամանակներում յայտնուեցաւ այդ, բայց շատ քիչ մարդիկ տեղեկութիւն ունին նրա մասին, այն ինչ ամեն մի շատ ու քիչ գրագացած մարդ արդէն ծանօթ է Մօնգօլֆիէրների անուան հետ։ (Կը շարունակուի)

ՄԱՐԻԱՄ ՓԱՄՓՈՒՉԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

ՀԱՐՈՒՍՏՆԵՐՆ ՈՒ ԱՂՔԱՏՆԵՐԸ

—Ինչո՞ւ համար բոլոր տղաները հարուստ չեն. մի փոքրիկ երեխայ հարցնում էր իր հօրը։

—Տղաս սպասեսիանեց հայրը, սկզբում աղքատ չէր կայ, բոլոր մարդիկ հաւասարապէս հարուստ էին. Աստուած այդպէս էր ցանկացել։ Բայց մի օր չարութիւնը սկսելով՝ միմեանց հետ կռուեցին և ով որ ոյժով էր տկարի ունեցածն առաւ։ Ահա այդ ժամանակուանից աղքատ մարդիկ և աղքատ տղաները եղան։ Հարուստներն իրանց զրկած անձանց ողորմութիւն տալը պարտականութիւն համարելով, աշխատեցին իրանց հասցրած չարիքը դարմանել, և առաքինութիւն անուանեցին այն՝ ինչ որ իրանց պարտքն է և այսպէս էլ շարունակեցին.

Բայց, որդիս, երբ մի աղքատ տղայի ողորմութիւն տաս, մի՛ կարծեր թէ՝ քո ունեցածիցդ ես տալիս, այլ նրա կորցրածի մէկ մասը իրան ես վերադարձնում։

«Բուրաստան Մանկանց»

ՓԱԿԱՆԱԳՈՐԾ ՊՐԻՆՑ

Յայտնի է, որ Հոհէնցոլէրեան տոհմը մի սքանչելի սովորութիւն ունի, այն է՝ նրա ընտանիքի անդամներից իւրաքանչիւրը պէտք է անպատճառ մի որևիցէ արհեստ սովորէ։

Այս սովորութեան համաձայն պրինց Ֆրիդրիխ Կարլի որդին՝ պրինց Ֆրիդրիխ Լէօպօլդը ընտրեց փականագործի արհեստը և այդ պատճառով Ֆրիդրիխ Կարլի պալատում կառուցուած է վականագործի մի դարձարան։

ԶՈՒՐՃԱԼԻՔ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

ԲԱՐԲՈ.

Բարբօ խաղալու համար հաւաքվում են մեծ ու պստիկ, առաջ մի որոշ տեղ են ընտրում, ասենք Ա, Բ տարածութիւնը և ամենքը կարգով կանգնում Ա տահմանում երկու ձեռքները դէպի յետ տանում ափերը դէպի վեր բռնած։ Խաղացողների գլուխը-մայրը մի փոքրիկ քար առած նրանց ետևը կանգնում է և ամեն մէկի ձեռքին դիպցնելով, իբր թէ ձեռքի մէջ է ուզում դնել, ասում է. «քարաբօ, քարը քեզ տամ պինդ պահիր, քարաբօ, քարը քեզ տամ պինդ պահիր. վերջը դնում է մէկի ձեռքում։ Ով որ քարը ստացաւ, իսկոյն փախչում է դէպի Բ տահմանը, իսկ մնացեալները վազում են ետքից. ով որ տահմանին չը հասած նրան բռնում է, նա տանում է խաղը և ինքն է լինում մայր, իսկ մնացեալները դառնում են իրանց տեղերը առաջուայ կարգով խաղը շարունակում, միայն այս անգամ նոր մայրն է քարաբօ ասում։ Իսկ եթէ չեն կարողանում բռնել քարը տանողին, դարձեալ մայրը առաջուանն է է մնում։

ՄԵԼԻՔ

26) Առաջ. Ղ*

Մի բառ գիտեմ չորս տառանի՝
Մանուկներին հաճոյական.
Քաղցր է հնչվում ամբողջապէս,
Իբրև օրօր ծնողական։
Բայց եթէ հնչենք երեք տառով,
Տղամարդու ձայն կստանայ,
Որ դիպչելով խրամներին,
Ծայրերի մէջ կանյայտանայ։
Ուր տխրալի ելևէջով
Նա կարտասուէ իբրև այրի,
Եւ կը ողբայ երկու տառով
Իբրև մի բոլ աւերակի։
Մինչ դեռ եթէ ամբողջ մնար
Եւ փոխ առնէր էլի մի տառ,
Նորա ձայնը կը բարձրանար,
Ինչպէս երկայն մի շամի ծառ։

27) Առաջ. Նոյն անձի

Վեց ընկեր են իրար կպած,
Միասին մէկ մօրից ծնած.
Առաջինից երկուսը մէկ տեղ
Այնպէս է ինչպէս կարագ եղ.
Իսկ երրորդից երեքն առած՝
Միշտ մի բանով են պարապած.
Բայց չորրորդից առնէք երեք,
Քաջ տղամարդ դուրս կը բերէք։
Սա, ի հարկէ, մի անուն է,
Բայց շատ քաղցր և սիրուն է.
Ով քոյր ունի, նա կիմանայ,
Եւ ով քոյր է՝ կուրախանայ։

28) Առաջ. Լ. Մ.—Ա.

Գտնել 9 բառ, որոնց սկզբի և վերջի տառերը վերէնվար կարդալով ստացուի մի այնպիսի նախադասութիւն, որ ամեն մարդ էլ բացականչէ՝ «Այո՛, շատ և շատ ճշմարիտ է»։ Այդ բառերը նշանակում են.—

Մեզ սիրելի մարդկանց մազմուլթիւն.
Երկու կողմից կարդացուող աղջկայ անուն.
Մեր թագաւոր Արտաշէս Բ-ի մականունը.
Ուրախակից բառի նոյնանիշը.
Օդի վերին մասը.
Աղջկայ անուն.
Միջարկութիւն, կամ Րումիլիայի գլխաւոր քաղաք.
Մահմեդականների ուխտատեղի և Գօտէմարտի նոյնանիշը։

Շ Ո Ի Տ Ա Ս Ե Լ Ո Ի Կ

Ալէր, ալէր, ալէր, ալէր, ալէր, ալէր . . .

ՐԵԲՈՒՍ

Առաջ. Գ. Խօջամիրեան.

Գտէք, ի՞նչ պտղի անուն է։

ԱՂԲԻՒՐԻ № 7–Ի ՄԷՋ ԵՂԱԾ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՐԵԲՈՒՍԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ։ 23) Օրօրոց։ 24) Մեղրահաց և արկանք։ 25) Հիւսնին պէտք է վճարեն իննըսուն կոպէկ։ ՐԵԲՈՒՍ Գոմ-էշ—Գոմէշ

Անցեալ օգոստոսի 22-ին գրականութեան մէջ մարեց մի աստղ ԵՒս. Փարիզի արուարձաններից մէկում երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց ռուսաց երևելի բեղետրիստ **Ի. Ս. ՏՈՒՐԳԷՆԻԵՎ**։

Հետևեալ համարում կը ծանօթացնենք մեր ընթերցողներին նրա կենսագրութեան հետ։

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵՐ

Այս №-ում ղեռևղեցինք պ. Րաֆֆիի «Մշակ» վերնագրով բանաստեղծութիւնը։ Դա մեր գաղանդատը հեղինակի առաջին գրուածքներից էր, որով սկսել է պ. Րաֆֆին իր երկարամեայ գրականական աշխատութիւնը։

Հետևեալ համարում կը խօսենք պ. Րաֆֆիի քսան և հինգ մայ անխոնջ գործունէութեան նշանաբանի մասին։

—

Ամերիկայ յունվարից պ. Ս. Սպանդարեանը հրատարակելու է «Նոր Դար» վերնագրով ամենօրեայ լրագիր։ Յանկանում ենք «Նոր Դարին» երկարատևութիւն։ «Նոր Դարի» գինը 10 ռ. է, բաժանորդագրութիւնը քացուած է։

—

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ պ. Ն. Խոսրովեանը ժամանակաւորապէս զադարացնելու է իր «Վարժարան» մանկավարժական ամսագիրը։ Շատ և շատ յուսալի երևոյթ, մինչև երբ մենք էլ պէտք է կարողանանք պահպանել մեր երեքերը։

—

Մեզ հաղորդում են, որ հայր Խորէն վ. Սահակեանցն Դելիջանում շուտով մի մանաղատական դպրանոց է բանալու ուսուցիչները պատրաստելու համար և նոյն տեղ էլ հրատարակելու է մանկավարժական ամսագիրը «Դպրանոց» վերնագրով։

—

Ներկայ համարի հետ ուղարկում ենք տարեկան մեր բոլոր բաժանորդներին «Աղբիւրի» առաջի պրեմիան՝ օլեոգրաֆիկական պատկերը։ Կէս տարուայ բաժանորդները, եթէ կամենան ձեռք բերել այդ պատկերը, պէտք է ուղարկեն 50 կոպէկ։

Խմբագիր-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Дозволено ценз. Тифлисъ. 28 сентября 1883 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул. № 5

«ԱՂԲԻՒՐԻ» ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ ԵՒ ԹԻՓԼԻՍԻ ՅԱՅՏՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Բնաբ Խօսնակ, Բանաստեղծուհին Ն. Տ. Աւետեան գլխին է . . . . . 50 կ.
2) Պօզնանի ուսուցչի օրագրից, Լիսաւոսի պատմած 20 կ.
Նոյնը կազմած . . . . . 30 կ.
3) Երկու Մանրավէպ, Ալֆոնս Դօդէ . . . . . 15 կ.
Նոյնը կազմած . . . . . 25 կ.
4 Սոխակ
5 Խոզաբած } Անգերսէն. 20 կ.
Նոյնք կազմած . . . . . 30 կ.
6) Հարս և Սկեսուր, Դիվիկէնս, Թարգմ. օր. Ն. Տ. Մարկոսեան . . . . . 15 կ.
Նոյնը կազմած . . . . . 25 կ.
7) Ղըլըջէ կընանոց պընը վըշտակը, մի պատկեր Ղարաբաղի կանանց կեանքից, Կ. Կ. Մ. Շահնազարեանց . . . . . 20 կ.

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ա) Ամսագրիս նիւթերը ուղարկողները պէտք է հայերգեն իրանց հասցէները, ոչ միայն անունով են գրում և ընկերական անուններն էլ։

բ) Անպայման ուղարկուած նիւթերը խմբագրութեան սեղկականուն թիւնն են համարվում։

գ) Զը տպագրուելի նիւթերը խմբագրութեան ստացած օրից վերջ ամէն կարելի է յետ ուղարկել տիրոջ ծախքով, ոչ նա երկու թերթից աւելի է, իսկ երկու թերթից պակաս գրուածները ընդունվում չեն ուղարկվում։

դ) Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել 5 հատ 7 կ. մարկաներ։

ե) Յայտարարութիւնները ընդունվում են միայն խմբագրութիւններից, գրավաճառողներից, գրադարաններից, թարգմանիչներից և ուսումնական պետքերը վաճառողներից։

Յայտարարութիւնների սանդ մի բաւ, մանր տառերով, վճարը 20 կոպէկ է, միջակ տառերով, 30 կոպէկ և մեծ տառերով 40 կոպէկ։

զ) Այն անձինք, որոնք մի ամսուայ ընթացքում №-ը լոյս տեսած և յայտարարած օրից չեն տեղեկացնել իրանց հասցէը չը ստանալուն համար, այնուհետև խմբագրութիւնս իրան պարտական չէ համարում բաւականութիւն տալ տպագիրներին։

Վրաստանի և Իմերէթի Հայոց վիճակային առաջնորդ ո. Արսէն եպիս. Թոդլաուրեանց Ներկայ սեպտեմբերի 1-ից բացուեց «Մանկական պարտէզ» վանաց առաջ. եկեղեցւոյ հովանաւորութեամբ և նոյն եկեղեցւոյ հանդէպ № 5 տանը։

Մանուկների ընդունելութիւնը շարունակուելու է մինչև հոկտեմբերի 1-ը։

Օր. Մարիամ Մամիկոնեան։

ԲՈՒՐԱՍ· ՄԱՆԿԱՆՑ

Պատիւ ունի հրատարակութիւն ամբողջ երկու անգամ, տարին գինը 4 ր. Հրատարակվում է Պօլսում. առաջարկել դարեւ է «Վարժարան» ամսագրի խմբագրատանը։

Մի երիտասարդ կամենում է պատրաստել երիտասարդին դէմ նազիայի կամ բէալական ուսումնարանների համար, հասցէն կասնել «Աղբիւրի» խմբագրատանը։

Մանկական Գրադարան - Ընթերցարան անվախտուհ պոլ. Մերզիֆոնների տունը, Սերգի սկի փողոցի վրայ։

Գրադարան-ընթերցարանը բաց է ամեն օր։ Գրքերը կարող են տրի օգտա քաղել։

Մի հայ վարժուհի փնտռում է մանուկը պահ. հասցէն կասնել «Աղբիւրի» խմբագրատանը։

«Ա Ղ Բ Ի Ւ Ր Ի»

Կէս տարուայ բաժանորդագրութիւնը շարունակվում է։

Կէս տարուայ բաժանորդները կը ստանան նաև №№ 4—6, որովհետև Հարֆիլդի կենսագրութիւնը, որ շարունակուելու է հետևեալ համարներում էլ, սկսուել է տպագրուել № 4-ից։

Կէս տարուայ բաժանորդագինը 2 րուբլի է։ Պօլսում «Աղբիւրին» կարելի է ստորագրուել «Բուրաստան Մանկանց» հանդիսի խմբագրատանը։

«Վարժարան» մանկավարժական ամսագրի խմբագրութիւնը պարտք է համարում յայտնել ընթերցող հասարակութեանը, որ այսուհետև ամսագրիս վերաբերեալ յօդուածները, թղթակցութիւնները ուղարկել, բաժանորդ գրուել կամ խմբագրութեան հետ որ և է վերջական յարաբերութիւն ունենալ ցանկացողները թող բարեհաճեն գիմել խմբագրութեան քարտուղար պ. Գ. Շահրուդաճանցին այս հասցէով՝ Въ г. Тифлисъ. Григорію Шахъ-Будагянцу Учителю Армянской Семинарій Нерсисьянъ. Абасъ - Абатская площадь, Соб. домъ кв. № 8.